

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

ՄԱՅԻՍ 1903
A. R. F. BUREAU
GENÈVE

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԹԻ ԶԻՆԱԴԱՐԱՐ

Հազարաւոր այլանդակաճ դիակներ, աւերաճ ու արիւնաներկ գիւղեր, իսպառ քայքայաճ տնտեսութիւն, մասսային դաղթ, մտալուտ սովի ուրուական և մի կատաղի, մի խելագար ռեակցիա...

Իեղճ Մակեդոնիա...

Վարդագոյն յոյսերով կուրի դաշտ նետուցիր և ահա ապստամբական առաջին թափերից յետոյ, դուն էլ ճաշակեցիր այն դժոխային հիասթափութիւնը, որ իր սրտաձմիկ մանրամասնութիւններով այնքան ծանօթ է հայաստանցուն... Վայ այսօր մակեդոնական ճգնաժամ, ոչ նւազ աղետալի, քան հայկական ճգնաժամը: Յեղափոխական ուժերը հնձաճ, բանտերը լեցուն, Դիլէյվ՝ յներքին կազմակերպութեան՝ պարագլուխը՝ սպանաճ, Սարաֆօվ՝ փախաճ Մակեդոնիայից, իսկ դիւցազնական չեռաները՝ մասամբ կոտորաճ, մասամբ ցիր ու ցան հայրենիքի խուլ անկիւններում:

Ֆիասկօ... Յեղափոխութիւնը առմիշտ յաղթահարաճ...

Անշուշտ—ձայնում է ամբողջային տրամաբանութիւնը:

Եւ—ինչպէ՛ս նման են ամբողջները ամէն տեղ—ահա Բալկանեան թերակղզում ևս, մակեդոնացիների ցեղակից բուլգարների մօտ, այսպէս անւանաճ «խոհմներին» բանակը, բոլոր երկչոտներն ու թուլամորթները, բոլոր արհեստով ֆրաղեօրները, որոնք քիչ առաջ պաղ հանդիսատես էին հերոսական կուրի, գորտի անխորժ կուրոց են բարձրացրել, քննադատում են կուրի հերոսներին. «այսպէս չպէտք էր անել, այլ այնպէս», «ապստամբութիւնը պէտք էր յետաճգել», «եւրօպական շահերին պէտք էր հարաւաճել», «ուժանակը, ռուսը մեր տունը քանդեցին», և այլն և այլն և այլն:

Այսպէս է եղել միշտ, այսպէս պիտի լինի միշտ և ամէն տեղ, ամէն անգամ, երբ ժողովրդային ազատագրական կուրը այս կամ այն պատճառով ձախորդութեան հանդիպէ...

Բայց Սարաֆօվները գործի վրայ են... Հեռու անարգ վհատութիւնը: Նրանց կողմը կը յարէ արիւննուաճ երկրի ամբողջ մտածող ու զգացող երիտասարդութիւնը: Ներկայ ճգնաժամը նրանք չեն դիտում, իբրև պարտութիւն, այլ միայն զինադադար: Փոքր ինչ կաղուրեւելով՝ նրանք կը շարունակեն կուրի ճանապարհը, միանգամ ընդմիշտ հրահանգաճ պատմութիւնից և իրերի տրամաբանութիւնից, որ այդ ճանապարհը թէև սարսափելի, բայց միանգամայն անխուսափելի է...

Թիւնից, որ այդ ճանապարհը թէև սարսափելի, բայց միանգամայն անխուսափելի է...

* * *

Մակեդոնական ձախորդութիւնը գուցէ մի նոր զէնք ևս աւելացնէ հայկական դաշտին: Հարուստ զինարանին. «Դուք մեզ չէք լսում. տեսէք, անցքերը իրենք են գալիս դատապարտելու ձեր սխալ ընթացքը, ապացուցանելու յեղափոխութեան անանկութիւնը»:

«Դուք մեզ չէք լսում... Տասնուհինգ տարի է, ինչ խոհմութեան, չափաւորութեան ներկայացուցիչները սուղացանում են մեզ «շահէներին» իրենց հայրական խրատ-յորդորներով: «Չաշէները» և «պառաւները» — խօսքս զգացումով պառաւների մասին է — յիրաւի երբեք չհասկացան իրար: Մի վիճ կար նրանց մէջ, որ ժամանակը և աղետները չկարողացան հարթել, որ ընդհակառակը միշտ աւելի ևս ձգեց, խորացաւ: Յարաբերութիւնները այնքան լարեցին կուր ու տանջող փոքրամասնութեան և տաք տեղից խրատող մեծամասնութեան միջև, որ ճգնաժամի գիտակցութիւնը ստիպեց յեղափոխական գործիչներին՝ զինել եղբօր դէմ և զէնքի ուժով շանթել խոհմութեան քոզի տակ ծածկաճ բուրժուազական գարշիլի անտարբերութիւնը... Մի հիւանդոտ, պաթօլօգիական երևոյթ է դա, ծնունդ այն ընդհանուր պաթօլօգիական դրութեան, այն արիւննուտ ու արհաւիրից ճգնաժամի, որի ստեղծողներից մինը եղաւ ինքը՝ հայկական համաբաւար խոհմութիւնը... Վարօտով սպասեցինք և երբեք չտեսանք տասնուհինգ տարւայ տարածութեան վրայ, որ խոհմութեան քարոզիչները գէթ իրենց ներբողաճ «չափաւորութեան» սահմանների մէջ փորձէին կատարել իրենց տարրական քաղաքացիական պարտը՝ դէպի մորթոտող եղբայրակիցները: Վարօտով սպասեցինք մի վիճանձն քայլ մի ազնիւ ը ի ս կ — ի՛նչ ենք ասում — գէթ մի փոքրիկ աջակցութիւն այն անմեղ ու անվնաս գործին, եւրօպայում սկսաճ հայանպատ շարժման, որի անհրաժեշտութիւնն ու անպայման օգտակարութիւնը գիտակցում են նոյնիսկ իրենք՝ չափաւորութեան ասպետները, և որի լուծը մնում է սակայն մինչև օրս էլ յեղափոխական մարմնի վզին:

Եւ դեռ յանդգնում են մարդկային շնորհքից զուրկ այդ որոճողները պահանջել մեզնից, որ համակերպենք իրենց խրատներին, զէնքը ցած դնենք, կամ ուրիշ խօսքով՝ ձգենք ժողովուրդը ի սաստ ճակատագրի...

Բարեբախտաբար ժողովուրդների ճակատագիրը չէ ղեկավարում ամբոխային տրամաբանութեամբ: Այս յեղափոխական փորձամանուկներն, որ — Մակեդոնիայում թէ՛ Հայաստանում — մնում է հեռու որոճող «ամբոխի» ներշնչումներից, մնում է բարձր առօրեայ շահերից, գձուձ միտումներից, մնում է հաւատարիմ անվկանդ մաքառողի կոչման: Դիտեցէք այդ սքանչելի հայ երիտասարդներին, որոնք իրենց մասնաւոր կենցաղի մէջ մի մի մաքուր, անաղալտ հոգիներ են, սոսկող ոճրից, գարշող արիւնից, և որոնք սակայն պարտքի գերագոյն զգացումից մղւած վագրի անգթութեամբ նետուում են իրենց զոհի վրայ, լինի այդ զոհը մի թիւրք ոստիկան, կամ մի ազգագաւ հայ լրտես, մասնիչ...

Դրանք են իմիպէս դրութեան տէրերը և բազմաթիւ են դրանք աշխարհ գալիս ժողովուրդի, տառապող ընդհանրութեան արգանդից...

Ի՞նչ է պակասում մեզ այս սարսափելի ճգնաժամին. — Շատ բան. բայց շատերի մէջ՝ մէկ կարևորագոյնը՝ որ եթէ ունենանք, կարող ենք յաղթահարել թէ՛ ներքին անտարբերութեան չարիքը և թէ՛ եւրօպական, դիւանագիտական անզգայութիւնը: Մակեդոնական վերջին անցքերից և տիրող ճգնաժամից քաղենք հրահանգներ: Այդ անցքերը մի աւելորդ անգամ թելադրում են մեզ՝ զգուշաւոր ու շրջահայեաց լինելու հետ միասին՝ ջանալ ստեղծել յարատեւ ու տոկուն յեղափոխական ուժ, որ կարողանայ պատուով դիմադրել և յաղթանակով դուրս գալ:

Աւելի քան երբեք անհրաժեշտ ենք զգում միացած տեսնել բոլոր գործող ուժերը, բոլոր գործի մարդկանց — որոնք այս կամ այն պատճառով հեռացած են կուրի ասպարէզից — մի ընդհանուր ու ներդաշնակ, մի եռանդուն ու կորովի գործակցութեան մէջ: Այդ է պակասում մեզ ներկայ ճգնաժամում և այդ պարագին է, որ պիտի լցնենք:

Եթէ մակեդոնացի յեղափոխականները չարաչար տուժում են ներքին կուսակցական բաժանումներից — առաւել ևս մենք, քանի որ մեր դիրքը շատ տեսակէտներով աւելի թոյլ է մակեդոնացիներից:

Այս ի՞նչ սարսափելի, վճատեցուցիչ մթնոլորտ է, ուր

յեղափոխական պաշտօնի կոչւած անհատներ, միևնոյն անունը կրող, միևնոյն կուսակցութեան պատկանող վարիչներ՝ իրարամբաստանութեան տենդով բռնւած՝ տարիների ընթացքում գրոհ են տալիս իրար դէմ և ոչ միայն լքանում են ժողովուրդի դատը, այլև սկսում են ոչնչացնել իրար: Բաւական չէ այդ — մի անհասկանալի ֆանատիկոսութեամբ նրանք շարունակում են թշնամական դիրք բռնել դէպի մի մարմին, որ անչլատու է իր ուժերի չափ...

Դժար է երևակայել աւելի փոքուր, աւելի ողբալի մի կացութիւն, և ժամանակ է վերջապէս, որ գործի աջողութեան նախանձախնդիր հասարակութիւնը հոգ տանէ սրբելու յեղափոխական ասպարէզից այդ վարակիչ ապականութիւնը, որ չափազանց երկար է աւելում: Մենք յարգում ենք հայ ազգայնագրութեան անունով պարզւած ամէն մի դրօշակ և չենք կասկածում, որ յեղափոխական ուրիշ կուսակցութիւնների մէջ կան խմբումներ, կան անձնուրաց ու անխարդախ գործիչներ, որոնց սիրտը արիւնտուում է ի տես այդ անվերջ երկպառակութիւնների և եղբայրասպան քստմանի դաւերի:

Ժամանակ է, որ հրապարակ գան նրանք — և աւելի կորովի, աւելի գիտակից, աւելի վճռական: Երբ անցքերը հրահանգում են մեզ աճապարել, երբ ամէն մի օր մի անակալ է բերում, երբ թշնամին միշտ սուրը ձեռին առիթներ է փնտրում՝ վերսկսելու արիւնտ ջարդերը, երբ ժողովուրդը օրէցօր սպառւում է և հայրենիքը անապատանում — յանցանք է, ոճիր է յամառել մի անհաշտ հակառակորդութեան մէջ և ձեռք չմեկնել գործող ուժերին:

Թող ասպարէզ գան, մենք կը դիմաւորենք նրանց սիրով, եղբայրաբար և կը ձգտենք գործել նրանց հետ համերաշխ, թե թեի տւած: Յեղափոխական փորձամանուկները պէտք է ստեղծենք, որքան այդ հնարաւոր է հայկական աղձատւած, թունաւորւած իրակաւութեան մէջ, ոչ մի անձուէր ուժ չպիտի դուրս մնայ կուռղիների շարքերից, — այն ժամանակ միայն մենք հանգիստ սրտով կը նայենք ապագային և այն ժամանակ աւելի վստահութեամբ կ'ասենք մեր ներքին ու արտաքին թշնամիներին, յիեղափոխութիւնը չէ ապարարել ֆիասիօ, սնանկութիւն, այլ միայն ժամանակաւոր ղինադադար:

Ա Ր Ի Ի Ն Ի Ի Ր Ի Կ Ո Ի Ն Ն Ե Ր

Հ Ո Ղ Ի Ն Չ Ա Յ Ն Ը

Ըսէք, ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելութեան ընկերներ, որ նորէն տառապանքի, յոյսի և քանդումի քաղաքներուն վրայ, Այս իրիկուն, ինձի կ'ըսեն, թէ բոցավառուող սուրբու հետ պիտի իյնայ, ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելութեան ընկերներ:

Ու խօսող ձայնը յաւիտենական մաքառումներու Հողին ձայնն էր, որ իր աւերակէ բերանները դէպի վեր՝ հորիզոններուն,

Մահազանգերու երկաթեղէն մըրկումի մը հանգոյն՝
Վրէժով ու ցասումով առլցուած, գերագոյն մարտահրաւէրը կ'աղաղակէր...

Ու ահաւասիկ ձեզի մահարոյր արձագանքն իր փրկարար խօսքերուն.

— Ո՛վ քաղաքներէս և երկիրքէս հալածուած թափառական զաւկըներ,
Մտիկ ըրէք, այս իրիկուն, ձեր հինաուրց և արգաւանդ և այրի հողին,
Ատելութիւնով, հեծկլտանքով և հոգեվարքով յղի,
Սա քինայոյզ ու արիւնոտ ու յուսահատ հրաւէրը պաղատագին...
Եւ եթէ կ'ուզէք որ ձեր վաղնջական ազգը դեռ տևէ,
Եթէ կ'ուզէք որ երկիրը անգամ մըն ալ ինքն իր մէջը չի քանդուի,
Եթէ կ'ուզէք որ ազատութեան հերոսները իմ կողերէս նորէն ծնին,
Եթէ կ'ուզէք որ արհաւիրակի գետերս դիակներով բեռցուած չի թաւալին...
Եթէ կ'ուզէք որ աստղերս բացուին, և բլուրներս ծաղկանան...
Եթէ կ'ուզէք որ աղբիւրներս երազներու պէս ճառագայթեն...
Եթէ կ'ուզէք որ բարեբեր դաշտերս նորէն իրենց ցորեանները ճովացնեն...
Եթէ կ'ուզէք որ մայրութեան կաթովս ձեր այգիները ոռոգեմ,
Եթէ կ'ուզէք որ արշալոյսներս մերկանան և արեգակներս ծագին...
Եթէ կ'ուզէք որ հովիտներս այլևս մահուան շունչին տակ չի հեծկլտան...
Եթէ կ'ուզէք որ սերունդներս բարգաւաճին և իմ այրիի դէմքս գէթ առաւուտ մը ժպտի...
Եթէ կ'ուզէք որ խաղաղութիւնը ձեր երգիքներուն տակ արձանանայ,
Եթէ կ'ուզէք որ ձերիներուն տաքարիւնը ճամբաներուս քարերէն վար ալ չի հոսի,
Եթէ կ'ուզէք որ ձեր Վրէժը լուծուի և ձեր Ատելութիւնը յափրանայ...
Եթէ կ'ուզէք որ Արդարութիւնը տիրապետէ և՛ իր ոստանը կառուցուի,
Եթէ կ'ուզէք որ Հայկաշէնն և Արմաւիրը, Տիգրայնակերտն և Արտաշատը վերականգնին,
Եթէ կ'ուզէք որ ձեր հոգիները զօրանան և ձեր ճակատները լուսաւորուին...
Եթէ կ'ուզէք որ դաժան խղճիխայթը ձեր ամենուն առջև գերեզմաններ չի փորէ...
Ինձի հասէք այն ատեն, մայրգնաբար և գունդ առ գունդ,
Բազուկներնիդ ըմբոստացու՛մի երկաթեղէն հովերուն
Եւ ճակատներնիդ բոլոր բաղնումներնուն կարկառած՝
Եւ աղաղակեցէք ճգնաժամերու մահաշուք օրերուն սահմանուած,
Արիացումի և անդահնալի ընդվզումներու,
Յուսադրող, սպառազինող, յաղթանակող
Ձեր սրտոտ և կատաղի կոչերն Ատելութեան,
Աղաղակեցէք զանոնք որոտումի գոռումներով ապերասան,
Դաշտավայրէ դաշտավայր, քաղաքէ քաղաք և հոգիէ հոգի,
Վասն զի դիտեմ որ այս վճռական ընդհարումներէն յետոյ,
Թշնամիս ոսկորներէն, յաղթանակին կոթողներն ահարկու,
Ահագնաբար, ճակտիս վրայ, ձեր ձեռքերով, աշտարակուին պիտի...

»Օգնութիւն աղաղակեցէք, ձեր հոգիին բարկութեան շունչովը բովանդակ
Ու թո՛ղ ցանուցիր զաւկըներուս ամբոխներն հայկական
Իրարու զանգուգածին, եղբայրանան, հրահրուին,
Ձեր վրէժի մահաշունչ կոչին պատգամներուն տակ,
Ու թո՛ղ ձեր դատականները կայծակներու նման գալարուին,
Ու գլուխներնիդ արիւնով և յոյսով խենթանան...
Ու թո՛ղ ձեր մերկացուցած սուրերը փայլատակեն,
Երկվարներու դռոյթէն արձակուած բոցերուն հետ,
Ու ձեր ջահերը թո՛ղ իրենց արևները տարածեն,
Ռազմադաշտէ ուղմադաշտ ու կատարէ կատար,
Օ՛ օգնութեան, օգնութեան, օգնութեան արշաւեցէք,
Զաւկըներուս սիրոյն և Արշալոյսներու հողին փրկութեանը համար...

»Ու որպէս զի ձեր հոգիներն արիանան և ձեր իրանները մարմարուին...
Որպէս զի Ատելութիւնը ձեր սրտին մէջը ծովանայ,

Որպէս զի ձեր քայլերը վճռուին ու ձեր կամքը փոթորկի,
 Որպէս զի ձեր հողին մահը գէթ անգամ մը ձեր ուղեղը դաշունէ...
 Որպէս զի ձեր բազուկները զարնեն ու ձեր կուրծքերը պղնձանան,
 Տեսէք անգամ մը օդնութիւն հայցող կարաւանները իմ մոռցուած դաւերներուս,
 ու անոնց մարմինները օրերուն ոճիրներէն քարուքանդ,
 ու անոնց որք հոգիներն ձեր լքուածներէն վիրաւոր,
 ու անոնց աքսորանքի շտապը իմ դժուարին բլուրներէս ի վեր,
 Ո՛վ գիտէ դէպի որ անդունդը, որ անողոք ապաւէնը, կամ որ գերեզմանը,
 Տեսէք, անոնց նայուածքները վերահաս մահէն զարհուրած,
 ու անոնց աղօթքը ու ճիչը ու պաղատանքը կարեւոր,
 Նորէն ու նորէն յուսալով և անձկագին դէպի ձեզ ակնդէտ,
 Ձեր բոլորէն, ո՛վ հալածական և հեռաւոր և տարագիր զաւերներ,
 Ձեր բոլորէն պաշտպանութեան շարժումը կամ կաթիլ մը արիւն,
 կամ քանի մը զօրաւոր կեանք, յոյսով և յուսահատութիւնով սպառազէն,
 Ձեր բոլորէն իրաւամբ և եղբայրաբար կրսպասեն...

»Աճապարեցէք, ձեզի՛ եմ, որովհետև բոլոր կեանքերը պիտի ջխջխտուին,
 Բոլոր ամոլները պիտի այրիանան ու բոլոր այրիները պիտի մահանան,
 Բոլոր նորածինները իրենց խանձարուներուն արիւնոտ ծալքերուն տակէն
 Իրենց կեանքին անգիտակ աչուրները մահուան մէջը պիտի բանան...
 ու դեռ բոլոր դիակները անգամ մըն ալ և վայրագօրէն
 Իրենց՝ կտակէ պատանքներուն ընդմէջէն պիտի յօշոտուին, պիտի սրածուին...
 ու բոլոր արգասաբեր արտերն ու խարտեաշ հունձքերն վաղորդայնին,
 Այգեստաններուն ու ծաղկադաշտերուն հետ բոլորը մէկ պիտի մոխրանան...
 Աճապարեցէք, բոլոր կաթողիկէները իրենց գմբէթներովը պիտի թաւալին,
 ու բոլոր քաղաքները քաղաքներուն և գիւղերը գիւղերուն տակ
 ու բերդերն ու պատնէշներն ու աշտարակներն դարաւոր՝ այս բոլորին վրայ...
 Աճապարեցէք, ո՛վ վրէժխնդրութեան օրերու զաւերներն անվեհեր,
 Դէպի ձեր հողը նուիրական, ձեր նիզակները ցցած ու ձեր կուրծքերը բացած՝
 Ձեր վահանը կռիւներու հովին, ու ճակատամուխ երկաթներնիդ ձօձելէն,
 Աճապարեցէք, ու վայրագաբար ու փոթորկապէս ու քինայողօրէն,
 Դէպի անառիկ ապառաժներն իմ յաւիտենական կողերուս...

»Ու այս ալ ըսած թող ըլլամ ձեզի, ո՛վ վարանոտ զաւերներս,
 Թէ՛ վրէժխնդիր ու սուրբ ատելութիւններէն վերջն է միայն
 Որ սրբազան ու աստուածային Սէրը կեանքին
 Իմ անսահման ու մայրական կուրծքիս վրայ պիտի ապրի...
 Որովհետև, աւա՛ղ, միայն ես գիտեմ թէ արիւնի ի՛նչ անագորոյն սահանքներ
 Իմ եօթը խաւերուս աղջամուղչներուն խորը սուզուելով
 Հաստատութեանս հիմունքները անողորմաբար ոռոգեցին...
 Միայն ես գիտեմ, իրարու ետևէ, անվերջօրէն, Հոգիիս խորը մխրձուող
 կիսաբաց դագաղներուն շարձատիւնը ահաբեկիչ...
 Միայն ես իմացայ բոլոր անպատմելի հոնդիւնները ոգեվարներուն...
 Բոլոր աղաղակներն անոնց, որոնք փրկուիլ ուզեցին,
 Բոլոր ցաւատանջ կարկառումը այն ամենուն,
 Որոնք դեռ վայրկեան մը արեգակը, արեգակը պաղատեցան...
 Միայն ես իմացայ բոլոր անձկութիւնը իրար դեռ տարփօրէն պաշտողներուն,
 Բոլոր կողկողանքը զաւերներէ բաժնուող արդէն այրի մայրերուն...
 ու այս բոլորին մէջէն հազնալից կրճտիւնը փշուող ոսկորներուն...
 ու իրաններէ անջատուող գլուխներուն վայրէջքը ցնորական,
 Միայն ես իմացայ, երբ կառափնատներու բարձրերէն իմ ճակտիս վրայ ինկան...
 ու վերջապէս միայն ես գիտեմ կուտակումները այն կմախքներուն,
 Որոնք սրտիս խորքերուն մէջը, որ ժամանակէն ի վեր, որ ժամանակէն ի վեր...
 Այնչա՛փ մըրկոտօրէն արմատացան, անտառուեցան»...

Եւ յետոյ Հողը քաղցրութեամբ՝ մաքառողներուն համար՝ սա աւետիսը տուաւ...

»Բայց հիմայ, ո՞վ դուք որ յամառօրէն մարմինս ու հոգիս կառչած էք,
 Դուք Հաւատարիմները, դուք Ուխտաւճները, դուք իմ Հարազատներս անբասիր
 Դուք որ իմ ցաւերս ապրեցաք ու ձեր արիւնը ինձի համար անխնայ բաշխեցիք,
 Դուք որ դասաւընթիւններու դժխեմ վատութիւնը չի ճանչցաք,
 Ձեզի եմ, սրտապնդուեցէք, յուսադրուեցէք, խաչահնքուեցէք,
 Քանզի, իրենց փախուստէն խղճահարուած ձեր եղբայրները բոլոր,
 Ահաւասիկ կը հասնին, Ատելութենէ հրաշացած ու Սիրով արբշեռ,
 Եւ արշալոյսին հուրերուն մէջէն իրենց երկաթեայ ձեռքերը ձեր ձեռքերը կը փնտռեն...»

ՍԻԱՄԱՆԹՕ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Բ Ղ Ի Է Ն

6 մայիս, 1903

Քղին Կարինի վիլայէթի ամենագլխաւոր գաւառը կարող է համարուել բաղկացած է 35 մեծ ու փոքր քրդախառն գիւղերից, որոնց մեծամասնութիւնը լեռնական են: Քղիի բնական գիրքը լեռնային լինելով՝ յաճախ նեղութիւններ է քաշում ցորենի համար: Գրեթէ միշտ հալուած է լինում իր տարեկան պարէնը հայթայթելու մէջ: 1895-96-ի չարաբախտ օրերից ի վեր տիրում է ծայրագոյն թշուառութիւն, որովհետեւ նմանը չտեսնած կողոպուտ ու թալան անցաւ նշանաւոր մի քանի հայ գիւղերի գլխով, որոնց մէջ ամէնից շատ տուժեց Սերկէիլ ըւած գիւղը, որ գտնուում է դէպի գիւղաքաղաք գնացող քիւրդերի ճամբուն վրայ:

Այդ արիւնաներկ, յուսախաբ ու թալանի օրերին՝ հայերս կարծում էինք, որ մեր փայփայած երազները, ցանկացած ազատութիւնը շուտով պիտի գտնենք և միշտ կրկնում էինք՝ »հայոց լոյս կը ծագի«, այսինքն ազատութիւն կը գտնենք: Սակայն իրականութիւնը մինչև օրս տրտունջ և արիւն է քսում մեր սրտերից:

Այսօր միևնոյն հեռապատկերն է ցցում մեր առջև: Հայ ժողովուրդը ահ ու դող մէջ է: Քիւրդերը ամէն օր խմբերով ման են գալիս հայ գիւղերում և արիւնածարաւ աչքերով նայում են մեր վրայ: Ի՞նչ պիտի անենք, ի՞նչ պիտի լինի մեր վերջը: Տիրող թշուառութեան և անօրինակ հալածանքների պատճառով շատ հայեր գնացին և դնում են դէպի Խարբերդ, շատեր էլ յուսահատած անօթի-մերկ մնալուց՝ դիմում են դէպի Ամերիկա: Խարոր, Պէլիճան, Խօզէվիթ գիւղերը Չարէք, Կաէք, Մասըքան, Գոււելան, Խալխուլ և ուրիշ մի շարք քիւրդ աշիրէթների ձեռքը զար են եկած, մանաւանդ Սերկէիլ գիւղը, որ ամէն օր սպասում է իր եղբերական մահան:

Չմոռանամ ասել, որ կան քրդեր էլ, որոնք զղջացեր են հայերին թալանելու համար, որոնք աչքերը քուսացան, մենք եկանք ձեզ թալանեցինք. մեր տարած կողոպուտները մի քանի ամսայ մէջ վայելելով, նորից ձեզինց անօթի ու խեղճ ենք մնացել, եթէ չանէինք, մենք արդէն հայերի շնորհիւ լաւ և հանգիստ կ'ապրէինք»:

Հայը ստեղծւել է այս աշխարհում չարաչար աշխատելու համար միայն. իսկ քիւրդը՝ նրա աշխատանքը վայելելու: Ի՛լ երեւակայեցէք թէ ի՞նչ դրութեան կը մատնւի հայ գիւղացին, երբ այդ տեսակ ըմբռնում կը թագաւորէ... Այդ բոլորը դեռ մի կողմ: Բայց ի՞նչ անենք, երբ քրդից ու տաճկից աւելի վատ հայեր կան, ազգակործան, դաւաճան, ցած հոգի հայեր, որոնց անունները հրապարակել

ինձ պարտք եմ համարում. Մարուգէ Ասլանեան, Մամիկոն Ասլանեան, Թորոս Սատրգեան, Արարան Տեփիկեան, Մարգար Մալոյեան և Պողոսեան Գալուստ՝ Սերկէիլ գիւղը դարձրել են անպատուութեան մի թատր, որոնց արածը կարող եմ ասել շէյխ Ջէլալէդինն էլ չէ արել հայերի գլխին:

Յիսուն տնից բաղկացած Սերկէիլ գիւղը, որը մի ժամանակ փուշ էր դարձել քրդերի աչքին իր մի քանի անվախ, կտրիճ տղամարդկանցով, որոնց պարագլուխներն էին Վօշկարեանց Գալուստը, Բրսոյեան Առաքելը և ըն. որոնք դժբախտաբար այսօր պանդխտութեան մէջ են թափառում — այս Յ-Ա տարւայ ընթացքում այդ 6 հայերի շնորհիւ, անօրինակ գաղանութիւնների է մատնւած. անխղճաբար կոյս աղջիկների պատիւն են բռնաբարում նրանք, քիւրդ և թիւրք զարթիաների հետ միանալով: Իրենց հայտնաց արարքների դէմ բողոքողները մերձ ի մահ ծեծել են տալիս և մի շարք անպատուութիւններ անում, որոնց թւելը ես ինքս ամօթ եմ համարում: զրիչս չի շարժում նկարագրելու համար... Ի՞նչ սոսկալի դարի մէջ ենք ապրում: Այս օրինակ բաներ օր ցերեկով նրանց համար սովորական են դարձել մանաւանդ իրենց հակառակողներին սուտ ու փուճ խօսքերով մատնում են կառավարութեան: Այնքան սանձարձակ և ազատ են իրենց հայտնաց արարքների մէջ, որ կարծես սուլթան Համիդի կողմից Ֆէրման տրւած լինի իրենց: Մէկ տարւայ տուրքի ու խամչուրի տեղ՝ ամբողջ գիւղը կողոպտեցին՝ քիւրդերի և թիւրքերի հետ միացած. ծախեցին բոլորի տան կահ-կարասիներն ու 200 օսմանեան ոսկիի մի գումար յանձնեցին հարկահաւաքներին, որ ոչ մի ժամանակ տեսնւած բան չէր: Ո՞ր մէկը թւեմ, բազմաթիւ են նրանց արածները հայերի գլխին: Անիրաւ տեղը ծեծել տւեցին Կիրիլիկեան Մարտիրոսը, որ մեռնելու աստիճան հիւանդացաւ և խելադարած մնաց ամիսներով անկողնում. շատերն էլ սոսկալի հիւանդութիւններ քաշեցին ծեծւելուն համար ու արիւն փսխում էին հիւանդ պառկած. պատճառը այն էր, որ բողոքած էին իրենց անիրաւութիւնների դէմ:

Ծանօթ դէպքերից յետոյ, ակնցի Մուսթաֆա անուն մուլեանդ, հայի արեան ծարաւ մի թիւրք եկաւ ինքնակամ. Սերկէիլ գիւղը հաստատուեց իր հետևորդներով: Մինչև օրս նրա ձեռքից քաշած գիւղի ժողովուրդի տանջանքն ու նեղութիւնը չափ ու սահման չունի: Վերոյիշեալ 6 սրիկայ, թրքամոլ հայերը միանալով Մուսթաֆայի հետ, աւելի ազատօրէն իրենց վատ կրքերին յարուրդ տալու համար, անպատմելի նեղութիւններ են տալիս գիւղացիներին: Յիշեալ թիւրքը, հայի պատուի հետ խաղացող այդ մուլեկոսը, սկսեց բոլորին տանջել բռնաբարելով մի քանի հայ աղջկանց և հարսների պատիւը, վերջնականաբար մի տարւայ ամուսնացած Աբօյեանց

Մկրտչի կինը Մարգրիտ իրեն կնութեան առաւ, որի էրեկը պանդխտութեան մէջ է: Եւ շատ չանցած՝ իր տղան էլ Երօյեան Մելքոնի մանկամարդ աղջիկը Երուսեակ կնութեան առաւ, բռնի առևանգելով: Եւ այս բոլորը, ինչ որ լինում է, պէտք է համոզել, որ յիշեալ Յ Տայ սրիկաների միջամտութեամբ և թելադրութեամբ է եղել և կը լինի:

Եյսօր մենք ճգնաժամային դրութեան մէջ ենք... Նոր կոթորածներ սարքելու մասին լուրեր են հասնում մեզ: Ամէն կողմ յուսահատութիւն ու լքում. ժողովուրդը զօրէկ ինքնապաշտպանութեան միջոցներից...

Քող լաւ հասկանան մեզ մեր եղբայրակիցները. թող նրանք պէտք եղած միջոցները խորհին հասցնելու մեզ: Եթէ կան անձնագոհ, ժողովուրդի յուսահատ դրութեան գիտակից անհասներ՝ ամէն փորձանք ու արիւն աչք առած, այս խուլ ու լկուղ անկիւնները թող գան պատրաստելու հային գալիք պայքարների համար:

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Յ Է Ն

20 մարտ, 1903

Ենցեալ 1902 թւականին տաճիկ կառավարութիւնը հարկաւոր պատրաստութիւնները տեսել էր Սասունն ու Մշոյ դաշտը արեան թատերաբեմ դարձնելու: Մեծ մարդասպանի պաշտօնեաների համար աններելի յանցանք էր համարում՝ սովորական բռնութիւնները մի արտակարգ հանդէսի չփոխելը, և այդ արտակարգ հանդէսը Մշոյ դաշտում և Սասնոյ լեռներում շառաչող սրերի ու ճայթող մահառիթ հրացանների սարքած արիւնոտ տեսարանը պիտի լինէր... Միայն այս անգամ ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել սարսափով համակած հայի վիճակը. արտասահմանի մեր ընկերների դիմումով և ֆրանսիական կառավարութեան ազդու միջամտութեամբ գործակալ ուղարկեց Մուշ կոտորածի ուրուականը տեղի տեղ և ժողովուրդի երկիւղը վերացաւ այս անգամ կառավարութեան ծրագիրը բնի մէջ խեղդեց: Մի փոքրիկ միթարութիւն էր դա, մի պզտիկ յաղթութիւն տանջած հայի համար...

Նոր գարունը յաղորդում է անցեալ դարնան: Տաճիկ կառավարութիւնը արդէն տեղ է հարկաւոր հրամանը անցեալ տարւայ ծրագիրը աւելի լայն սահմաններում գործադրելու, քրդական աշիրէթները պիտի գումարելին Մուշ Հայտարանցիների մի աղայ 500 հոգիով պիտի այցելէ Ալաշկերտն ու Բասենը. Զամատանցիների աշիրէթը պիտի գումարելի Բասենի և Ալաշկերտի սահմանը: Ամէն կողմ պատրաստութիւններ են տեսնում՝ անցեալ տարւայ պակասը այս տարի լրացնելու, նոր-արիւնոտ յաւելւածներով տաճիկ ամբոխը՝ դրգուած Եւրօպայի մակերգծական գործերում խառնելու պատճառով՝ ամէն տեղ սպանալիքներ է կարդում հայերին... 95-96 թւականների անպատիժ ջարդերից յետոյ նա երես առաւ. ամենափոքրիկ մի գրգռիչ լուր հերիք է նրա դիտում նոր կոտորածի միտք ծնեցնելու և ամենամանչան մի հրաման բաւական է Հայաստանը դժոխքի վերածելու... Եթէ մեր հայ եղբայրակիցները շուտընդօրինութեամբ չգան մեզ, մենք իբրև ոչխարի հօտ՝ անմուռնջ

զոհ պիտի դառնանք մարդկային սպանդանոցում և, որ ամենավտանգաւորն է ու ամենաաններելի ոճիրը մեզ համար, մեր մի բուն քաջ ընկերներն ու ազատասէր լեռնցիները պիտի ներկեն Սասնոյ ժայռերը իրենց արիւնով, յաւիտենական անէծք կտակելով մեզ... Ամէն անգամ մենք չենք կարող յուսալ եւրօպական ունէ պետութեան միջամտութեան վրայ. ամէնից շուտ, ամէնից առաջ մեր ինքնօգնութիւնը մեզ վահան պիտի ունենանք. գալիք օրհասական օրերին, մեր կուրծքը թշնամու գընդակին դէմ դնելու վայրկեանին, մենք պիտի զգանք ու գնահատենք մեր արիւնակից եղբայրների և քոյրերի նիւթական ու բարոյական աջակցութիւնը:

Ն Ա Մ Ա Կ - Տ Ե Ր Ս Ի Մ Ի Ծ Ր Զ Ա Ն Է Ն

4 մայիս, 1903

Տիվրիկի մէջ ժողովուրդը ծանր, գրգուած դրութեան մէջ է. կառավարութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ՝ հայ ազգաբնակչութիւնը փճացնելու: 18 տարի առաջւանէն Պօլիս վճարուած տուրքերը, որոնց կտրօնները թալանին փճացած կամ կորսուած էին՝ հիմա կրկին քիչ շատ ինքզինքը կառավարող դասակարգին վրայ բարդեցին և բռնութեամբ կը գանձեն: Սերմացու, եղ և շն, ամէնն ալ գրաւեցին: Գալիք տարի սովը կըսպառնայ մեզ բնաջինջ ընել պատճառ՝ որ ցանեղ անկարող ենք. ամէն բան գրաւեցին տուրքի փոխարէն: Իւրաքանչիւր հայ դիւղ ցորենի մէյմէկ շտեմարան շինեց՝ կազի շտեմարաններէն ալ մեծ:

Երգչկայի հարաւարեւելեան կողմը գտնուող և 120 տուն բնակչութիւն ունեցող Ղարաթուղ գիւղը, որի 1/4-ը հայ, 3/4-ը թիւրք է, բազմատանջ Հայաստանի մի հարազատ կտորը կը ներկայացնէ: Հայերը ծանօթ են իրենց աշխատասէր ու չարքաշ կեանքով: Սովորականէն չչեղելու համար, թիւրքերու բռնութեան տակ անխղճօրէն կը կեղեքուին, կը չարչարուին, կը հալածուին: Մեզի պէս մօտէն տեսնողները միայն կրնան լիովին ըմբռնել այդ բառերու իմաստը, երբ նոյնիսկ առանց սեթեւեթի, ամենապարզ շեշտով մը ըսած ըլլայ: Մեր առօրեայ կեանքը լի է արարքներով, որոնք իրենց մէջ ամբողջ եղբրական պատմութիւններ կը մանրանկարեն, և չեմ գիտեր ե՞րբ յուսահատի խուլ զայրոյթը պիտի պոռթկայ օրհասականի մը կատաղութիւնով: Ղարաթուղի մէջ Դահիր օղլի ԱՏմէտ համբաւ ստացել է իր գազանային բնագիծերով ու ոճիրներով: Ասկէ 4-5 տարի առաջ նոյն գիւղացի թերզեան Եղիայի հարսը կը լլկէ. խեղճը սրտի կսկիծէն կը մեռնի, էրեկը կը պանդխտի ու կ'անհետի: Դահիր օղլին Եղիայի կինն ալ կը բռնաբարէ ու անոր տանն ու պարտեզին անպատիժ կերպով կը տիրանայ: Ապա նոյն անխղճութեամբ ու սպանալիքներով կը տիրանայ նաև Բաղդեան Յովհաննէսի տանն ու պարտեզին:

Տուրք հաւաքելու ատեն ծեծ, հայհոյանք ամենահասարակ միջոցներն են, որոնց գլխաւոր դերակատարը միշտ յիշեալ Դահիր օղլին կը մնայ: Վերջերս դարձեալ իր դրացիին տունին մէկ մասը բռնի կը գրաւէ և իրենցին կը խառնէ՝ խոհանոցի պէտք ունենալուն համար: Եկեղեցական մը դէպքը կառավարչին կ'իմացնէ, բայց ապարդիւն կը մնայ: Բանի մը օրէն, ետքը կառավարիչն տարբեր գործով Մեղոցիք գիւղը գտնուած ատեն,

Ղարաթուղի Բաղոյեաններ առիթը կը գտնեն ներկայա- նայու և ԱՏՄէտի ամբողջ շարագործութիւններու մասին բողոքելու: Կառավարիչ փաշան՝ արդէն ծանօթ ըլլալով, քաղաք վերագարձին բռնել և բանտարկել կուտայ ԱՏ- մէտը, որ աղբեցիկ Խօջազատէ Ֆէյզի մօլլային միջնոր- դութիւնով մէկ գիշեր միայն բանտ կը մնայ ու կ'ազատի: ԱՏՄէտ գիւղը կերթայ ու հոն թիւրք երիտասարդներուն կը գրգռէ, որպէս զի ամէն չարիք հասցնեն հայերուն և իր վրէժը լուծեն: Այդ խօսքերու ազդեցութեան տակ՝ Փազլ օղլի Աէլիբի ծառան Սլէյման՝ յունիսի 29-ին փոքր աղջիկներուն վրայ յարձակելով՝ Գարազարեան Յակոբի 9 տարեկան սղիկը բնական թէ անբնական կերպով կը պղծէ. գործը գիւղը կ'իմանայ, ու յիշեալ Խօջազատէ, որ այդ ատեն հոն կը գտնուէր, ոճրագործն առ երեսս ծեծել կուտայ և մինչև Գարաքիլիսէ գիւղը տանելով՝ հոն կ'արձակէ: Գիւղացի հայեր հաւաքաբար ազգային առաջնորդարան եկան և բողոքեցին, ետքն ալ կառավարութեան բողոքեցին: Գատապարութիւններէն ետքը, որոնց միջոցին փնջուշտ շատ դրամ ծախսեցաւ՝ հազիւ թէ աղջիկն պղծող Աուէյման բանտարկեցաւ, ան ալ տակաւին յայտնի չէ, թէ որչափ ատեն բանտը պիտի մնայ:

Տերսիմի քրդերը իրենց ասպատակութիւնները սկսան: Անցեալ տարի Կարնոյ ուղիական հիւպատոսը կողոպ- տելու առթիւ ահագին աղփուկ եղաւ. քանի մը հազար զինուորներ շարժումի մէջ դրեցան, ամբողջ Տերսիմը պիտի նւաճուի՝ լուծեցաւ: Բայց հազիւ թէ 17 քրդեր բռնեցին ու բանտարկեցին, որոնց մէկ քանին միայն մասնակցութիւն ունեցեր էին գործին: Յետոյ կառա- վարութիւնը քրդերը խաղաղացնելու համար՝ իրենց խոստացաւ արձակել բանտարկեալներն, բայց դեռ կը մնան: Քրդերը, որոնք խօսքով փոհացող մարդիկ չեն, քանի մը շաբաթներ առաջ դարձեալ յարձակեցան Բոլոմորի գայմագամի վրայ ու գերի տարին Տերսիմի խորքերը՝ միւսոյն ատեն կառավարութեան լուր ղրկելով՝ թէ իրենց բանտարկեալներն արձակեն, հակառակ պա- րագային գայմագամին կեանքին սպառնալով: Կառա- վարութիւնը 4-5 հազար զինուորներ և մի քանի լեռնային թնդանօթներ հանեց ու միւթէսարիֆին հետ ու իր արամադրութեան տակ, Տերսիմը նւաճելու ուղարկեց: Ասոնք կերթան, մէկ-երկու պարպակ գիւղեր կը գտնեն, կ'այրեն, կը ուժբակոծեն զանոնք՝ նախապէս կարծելով թէ հոն բնակիչներ կը գտնուին, ու քանի մը ոստի- կաններ ու զինուորներ սպաննելով ետ կը դառնան. . . յաղթական: Միւթէսարիֆն պաշտօնանկ եղաւ: Այս կերպով վերջացաւ Տերսիմի նւաճումը: Գալով քրդերու ընդհանուր արամադրութեան, իրենց մէջ ցեղային հա- կառակութիւնն հետզհետէ կ'արձարծւի: Արնայ ըսելի թէ իրենց ասպատակութիւնները աստիճանաբար կա- նոնաւոր ուղղութիւն կը ստանան վերջին քանի մը տա- րիներու շրջանին մէջ մանաւանդ միշտ կառավարութեան դէմ ուղղած: Իրենց ցեղային անկախութիւնն բացարձա- կապէս ձեռք ձգելու գաղափարը անծանօթ չէ իրենց: Թագուն կերպով կը զինուին. լաւ զէնքերու համար գրքով բնաւ չեն խնայեր: Յայտնի կերեալ, թէ մինչև հիմա ձեռք բերած յաջողութիւններէն խրախուսելով՝ աւելի մեծ կոխներ մղելու կը պատրաստուին: Արնայ յուսալ թէ մէկ-երկու տարիէն արձագանք տալու արժանի դէպքերու ականատես պիտի ըլլանք: Ամէնը պարագայի, ժամա- նակի խնդիր է:

Այսօր հաստատեցաւ նաև թէ, քրդերն կառավա- րութեան անկարողութենէն քաղաքներով՝ յարձակե- ր են հայաբնակ վեցերկ գիւղին վրայ, որի բնակիչները վախնալով չեն դիմադրեր ու մաս մը դրամ-զգեստեղէն տալով, ձամբած են քրդերը: Արեւիկներս հաղորդեր են թէ տակաւին դիտաւորութիւն ունին ուրիշ գիւղերու վրայ ալ յարձակիլ, իրենց աւարի բաժինը հանել: Հա- կառակ կառավարութեան իմաց տրուելուն՝ ուէ կարևո- րութիւն չ'ընծայեցաւ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի Ս Ղ Ե Ր Դ Ի

(Շարունակութիւն N° 4-ի)

8 նոյեմբեր, 1902

Օգոստոս 31-ին, իրիկան ժամը 11-ին, ԱՏՄէտ պինի Մուսա թիւրք պատանին մի քանի ընկերներով քաղքիս հայ երեւելիներէն Պապէ Յարութի տղան Գասպար, իր տան առջև կը ծեծեն քարով: Բիրերով, մարմինը կը խոշտանգեն, զլուխը կը ձմբեն: Խեղճին վիճակը ծանր է:

Միւսոյն ատեն Բաս թաղեցիկներէն երկու թիւրքեր կուելով՝ զիրար կը վերաւորեն: Առ հասարակ ամէն հասակէ թիւրքեր զէնք կը կրեն ամէն տեղ և ամէն ժամ:

Օգոստոս 31-ին Տէհի նորակառոյց վարժարանը հիմէն կը փլցւի տեղական կառավարութեան ձեռքով, իրը թէ առանց արտօնութեան շինած էր: Յայտնի է որ կառավարութեան նպատակն է բողոքովին թրցացնել գիւղացի 300 տնւոր հայ համայնքը, որոնցմէ արդէն 1895-ի դէպքերէն իվեր 200 հոգիի չափ այժ կամ այն կերպով տաճկուցած են: Եթե թաղ տարի է գիւղին դպրոցը փակած է և ցարդ կարելի չեղաւ վերաբանալ զայն. և հոս է որ կը տեսնուի թիւրք կառավարութեան թաքուն նպատակը:

Սեպտեմբերի սկիզբները ձեգիրէն Մուսուլ ձամբու վրայ Մարո փաշայի տղան Քէրիմ, որ իր կալաճներուն հսկողութիւն ըրած ատեն անկէ անցնող կարաւաններն կողոպտելու դժգոհած ալ է, 150 զինեալ մարդիկներով կը յարձակի իր վրայ զրկած և զինքն ձերբակալելու պաշտօն ունեցող զօրքերուն վրայ և կըսպաննէ հազա- րապետ մը, փոխ-հազարապետ մը և 12 զինուոր:

Ճիղբէի թղթատարը ձամբան կը կողոպտուի նոյնպէս Միրան աշերէթի հրստակներու կողմէ: Այս լուրը պաշ- տօնական աղբիւրէ քաղած է:

Ս ե պ տ. 4. -- Թըլօի մէջ ոչինչ խնդրոյ մը համար թիւրք մը իր դրացիներէն մին դաշոյնի երկու հար- ւածով կըսպաննէ և կը դիմէ ի փախուստ:

Սեպտ. 5-ին, ցերեկան ժամը 5-ին, շուկայի հրա- պարակին վրայ խաղաղորդ Իսա վերաւորեց Համար Ֆարէս անուն թիւրքը և փախաւ:

Սեպտ. 6-ին քաղաքիս էշգըլաններու պետ՝ երկու եղբայրներ՝ Թահր և Նասրի մի քանի հետևորդներով շուկայ կ'իջնեն և վաճառական դասակարգէն բռնի դրամ և այլ կը պահանջեն. վաճառականք, առ հասարակ թիւրք, իրենց եղած այս հրապարակային անպատուութենէն ստիպեալ՝ իրենց խանութներն կը գոցեն և կառավա- րատուն կը դիմեն բողոքի: Կառավարութիւնը կանչեց հարցաքննեց եղբայր էշգըլաններն, բայց նկատելով՝ որ

իր հեղինակութիւնը չի զօրբեր զանոնք կարգի բերելու, խնդիրն զինւորական ատենին յանձնեց... ի խայտառակութիւն:

Ս ե պ տ. 9.—Մէհմէտ Բէսուլի և Թանչէի աղա Էօմէրի կուռն յանրամասնութիւնները և Ա-ին կառավարիչ փոխանորդին ու զօրաց հետ ծանօթ կիրճը երթալը արդէն գրած ենք օգոստոս 31-ի աշիրէթական ընդհարումին մէջ: Միւսթաֆա փաշային սպանութենէն կառավարիչը ահաբեկած Տէհի տեղակալին հետ Մէհմէտ Բէսուլ աղան Տէհ կը զրկէ բանտարկել տալու դիտումով, բայց նրբամիտ աղան գուշակելով իր գլխուն գալիքը, 1-2 ժաման ընկերակցութենէ յետոյ սպասաւորներովը իր գիւղին ճամբան կ'ուղղուի, կարևորութիւն չտալով տեղակալին յորդորներուն և սպառնալիքներուն: Տուն հասնելուն կը հաւաքէ իւրայինները և իր հրկիզեալ գիւղերուն վրէժը լուծելու համար կը յարձակի Թանչէի և Գէվուշի վրայ, կը թալանէ և կ'այրէ (երկու գիւղերը միանգամայն 130-150 տուն), այստեղ ալ կատաղի քաղաք մը կը սկսի, երկու կողմէն 18 հոգի կը սպաննուի, որոնցմէ երկու դիակ իբր նմուշ հոս կառավարութեան բերին:

Ս ե պ տ. 10.—Քաղաքէս երկու ժամ հետի դէպի հարաւարևմուտք, գըթմոսցի Միլօ անուն երիտասարդ քաղաքացին գիւղ քացած ատեն անծանօթ չարագործներու կողմէ կը սպաննուի և իր հեծած ջորին կը տարի: Դիակը երեք օրան փնտռուածքէ վերջ ջերմուկի կողմերը գտնելով՝ տեղս բերւեցաւ, սրախողեսող վիճակի մէջ:

Մ ի ր ա ն հ ա մ ի դ ի է ա շ ի ր է թ ի ն պ ե տ մ ի ր ա լ ա յ Մ ո ս ւ թ ա Ֆ ա փ ա շ ա յ ի ս պ ա ն ու թ ի ւ ն ը.—Յիշեալ փաշային և շէրնախցիներուն ամէն տարւան ընդհարումներուն և անոնց անհաշտ ատելութեանց առթած վնասներու ու աւերումներու մասին բազմիցս գրած ենք արդէն:

Ինչպէս ամէն տարի, այս տարի ևս շէրնախցիք իրենց կուսակիցներով և Ապտիւրահման աղային առաջնորդութեամբ նորէն կը բռնեն Շքէս անուն կիրճն, բայց այս անգամ լըջօրէն: Մեր խայտառակ կառավարութեան գլխաւոր պաշտօնեայք, գործը անուշ տեղը կապելու ծիւղած դրութեամբ, զօրքերով և շէրնախցի վերոյիշեալ կիրճը կը դիմեն, կը թախանձեն, կը համոզեն յիշեալ աղան որ ճամբայ տայ Միրան աշիրէթի, բայց իզուր, շէրնախցիք անդդուելի կը մնան: Բազմաթիւ զօրքերը իրենց թնդանօթներով ոչինչ կ'աղղեն, հուսկ ուրեմն յարձակումով մը կը յաջողին սպաննել նոյն ինքն Միւսթաֆա փաշան (օգոստ. 31-ին) իր մի քանի ժողովուրդ ազգականներով: Զարհուրելի կ'ըլլայ ընդհարումն. 300-է աւելի մարդեր կ'ընկնին դիտապատ, ոմանք գնդակով, ոմանք մորթելով: Քաղաքագետ կառավարիչ վէրիլին, ոստիկանական հազարապետ և քաղքիս շուկաներու մէջ ամէն տեսակ անգթութիւններ գործող զինեալ 200-է աւելի զօրքեր ականատես միայն կ'ըլլան: Կառավարական պաշտօնեայք և զօրքեր տակաւին վերադարձած չեն և ըստ ոմանց՝ գիւղի մը մէջ ապաստանած՝ չեն համարձակիր դուրս ելնել, աւելի լաւ է ըսել շէրնախցիներուն կողմէն հ ա ճ ղ եղած են: Միւսթաֆա փաշան իր առատ նէրտներով ու կաշառներով Թրանսիլվանեան հանք մ'էր Դ. զօրաբանակի հրամանատար Զէքի փաշային,

որ անշուշտ հիմա կ'ողբայ, կը կոծէ դառնաղետ մահն Մսթօ փաշային:

Պաշտօնական և անպաշտօն մարդոց միջև շրջած տարաձայնութիւններէն կը հասկնանք.

1) Իբր այն թէ օգոստոս 4, 8-ին մայրաքաղաքէն հեռագիրներ կուգան, որով ի պաշտօնէ ժողովուրդը զինելու հրահանգ կը տրուի կազմ ու պատրաստ գտնելու համար հայերուն երկրորդ անգամ ջարդ տալու: Օգոստ. 12-ին երրորդ հեռագրով ժողովուրդը հանդարտութեան կը հրահարուի:

2) Օգոստ. 3 հեռագրաւ գոմիսէրութեան կը ծանուցուի, թէ 7,000 մ է ն ա թ ի ր (չգիտենք ի՞նչ կը նշանակէ այս բառը, մարդ, զէնք, թէ տեղեկատուն սխալ կարգացեր է բառն) դրամի մեծ գումարներով Թիֆլիսի, Կաղզանի և Պարսկաստանի գծով Թիւրքիա մտած են Դաւուրիկ խումբը ուժովցնելու համար: Այս լուրը կառավարութեան իմացուցեր է Կաղզվանի իտարէի ժողովին թիւրք անդամը:

3) Թիւրքերը այս միջոցիս ծայրաստիճան կատղած են, շարժ շ'անցնիր որ 1,000 ղուրուշէն աւելի ապրանք բռնի շուկայի հայ արհեստաւորներէն չառնեն: Ոստիկանք, փօլիս, գոմիսէր աչքերնին չորս բացած զայրացկոտ դիրքով հայերը կը դիտեն: Ասուած մեղանշեր է մեզի աչք, ոտք տարով, մէկ խօսքով, զմեզ կամ չստեղծէր կամ այս վիճակին մէջ չթողուր. իր պատուոյն դէմ է, թիւրքին նայեցար մի՞, «վայ խընդեր, քէլպ է՛ր կը նայիս այսպէս պիշպիշ», քէլկ մ'արագ քալեցիր, վայ քեաֆիր այդ ի՞նչ քալածք է, միշտ ծեծ, միշտ խայտառակութիւն:

Իրենց անգութ քմահաճոյքին երեսէն կեանքն ալ անտանելի բեռ մը դարձած է: Միշտ պատրակ կը ստեղծեն հայերու հետ վէճ ունենալու համար, վայ այն հայուն, որ իր վրայ դրած ճնշումի, կեղեքումի մասին համարձակի բերանը բանալ վայ քեաֆիր Մէհմէտի հաւատքը քֆրեցիր—թիւրք խուժան, գոմիսէր, փօլիս, զօրք հասնելով՝ խեղճին հոգին կը հանեն:

»ՄԻՌԻԹԵԱՆ« ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՆՐԱՆՑ ՎԱՍՃԱՆԸ

Ներքև գետեղած են պատճենները այն նամակների, որոնք փոխանակել են Հ. Յ. Դ. Արևմտեան Բիւրօյի և Հնչակեան Միացեալ կուսակցութեան կենտրոնի միջև՝ «միութեան» խնդրի առիթով:

Հարկ չկայ, կարծում ենք, երկարօրէն կանգ առնել այն պատճառների վրայ, որոնք թելագրեցին մեզ բռնել նամակներում պարզած ուղղութիւնը: Անցեալ տարւայ ապրիլ ամսին մենք յայտարարել էինք.

«Որքան մենք սրտանց անպայման համակրող ենք ըստ յեղափոխական նկարագրի ունեցող ուժերի համախմբման՝ այնքան և դարձում ենք «միութեան» յախուռն, անխուսապ պայակներին, այնքան և երկիւղ ենք կրում այնպիսի մի հեռուպատկերին, ուր — այս կամ այն կերպով վերջապէս իրագործւած — Յեղափոխական ամբողջական միութեան» ծոցում ուռաջին վայրկեանից իսկ երևան կը դայ կայմալուծման աղետաբեր սողմը:
»Եթէ մեր նպատակը պետք է լինի՝ յեղափոխական գործը»

կաղմակերպել և ոչ կաղմայութեւն ապա պարտաւոր ենք միութեան բանակցութիւնների մէջ լինել շքաճայեաց և խտտապահանջ¹⁾։

Ղաղուց ի վեր ան վստահ դէպի Հնչակ. կուսակցութիւնը, իբրև յեղափոխական գործող մարմին, թերահաւատ դէպի Հնչակ. վարիչ մարմինները, մանաւանդ պ. Մխիթարի յայտարարութիւնից յետոյ¹⁾, որ «չկայ Ղերակազմ. Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող օրինաւոր մարմին մը» — մենք այնուամենայնիւ չէինք կտրել բոլորովին մեր յոյսերը և ենթադրում էինք, որ Հնչակեանները մի օր նորից կը կանգնեն յեղափոխական մարմնի կոչման բարձրութեան վրայ։ Ահա թէ ինչու, երբ յայտարարեց Հնչակեան հատուածների միութիւնը, մենք մեր պարտքը համարեցինք մի անգամ ևս որոշ քայլեր անել «միութեան» հարցը առաջ տանելու համար։

Հրահրելով Հնչակեան միացեալ կենտրոնին՝ ներկայացնել մեր ընդհանուր ստորագրութեամբ Բիւրօյիս հայասեր կօնգրէսին յատուկ զեկուցագիր՝ յեղափոխական ուղղութիւնը պաշտպանելու համար, կազմելով և ներկայացնելով այդ գրութիւնը²⁾ մենք իրաւունք ունէինք կարծելու, որ մեր այդ գործնական քայլը օրինակ կը լինէր և Հնչակեան միացեալ կուսակցութեան կենտրոնին՝ անկեղծօրէն և գործնականօրէն վերաբերել դէպի մեր յետագայ քայլը — «միութեան» բանակցութիւնները։

Մեր յոյսերը չ'իրականացան։ Բիւրօյիս արած մի քանի առաջարկութիւններին (տես 1902 թ. օգոստ. 25-ի նամակը)՝ ա) Երաշխաւորել, որ 1900 թ. յունւարին մեր առաջագրած նախնական պայմանները արդէն իրագործուած են, բ) Ուղարկել մեզ միացած կուսակցութեան ծրագիրը և գ) Ապագայ բանակցութիւնները վարող անձնաւորութիւններին ընտրել փոխադարձ համաձայնութեամբ — մեր այս առաջարկութիւններին պատասխանեց բացասականօրէն։ Միացեալ Հնչակեան կուսակցութեան կենտրոնի կարծիքով (տես 1902 թ. օգոստ. 30-ի նամակը), ծրագրային և այլ խնդիրներու մասին խօսելու էր ապագայում, իսկ ներկայումս հարկաւոր էր միայն նշանակել երկու կողմից լիազօրներ։

Մեր երկրորդ, աւելի մանրամասն գրութեան (24 սեպտ. 1902 թ.), որով բացատրում էր Բիւրօյիս դրած պայմանների անհրաժեշտութիւնը միութեան բանակցութիւնների յաջող ելքի համար և այդ պայմանների մերժման դէպքում առաջարկում էր գոնէ նշանակել մի մի ներկայացուցիչներ՝ համերաշխ գործունէութեան հիմք դնելու համար, — մեր այդ երկրորդ դիմումին միացեալ Հնչակ. կենտրոնը մինչև օրս էլ չէ պատասխանած։

Թիշտակած բանակցութիւններից մենք կարող էինք միայն մէկ եզրակացութեան գալ, այն է որ «միութեան» մասին միշտ խօսող և այդ անունով միամիտներին շահագործող Հնչակեան միացեալ կուսակցութիւնը իրապէս չի կամենում, կամ անկարող է դիմել յեղափոխական ուժերի համախմբման։ Եւ դա զարմանալի չէ։ Աերջին ամիսների ընթացքում երեւան եկած տիւր փաստերը վերջնականապէս պարզեցին մեզ և հայ հասարակութեան, որ այլևայլ Հնչակեան հատուածները կամ «միացեալ» անուն տակ ծածկած մարմինները էպպէս չեն համապատասխանում յեղափոխական կուսակցութիւնների կոչման և գոյութիւն ունեն միմիայն անունով։

1) Տես «Դրօշակ» № 4, 1902 թ.
2) Տես «Դրօշակ» № 7, 1902 թ.

Մի տարի հազիւ է բոլորել այն օրից, երբ հին և վերակազմեալ «Հնչակեան» հատուածները մեծահնչուն կոչեցող ու փայլուն սոնախմբութիւններով աւետեցին հայ աշխարհին, որ «միութիւնը» կայացած է և որ «ամբողջ կուսակցութեան քէնով ընտրուած է միակ կենտրոնական վարչութիւն»։ Այս յայտարարութեան չհաւատացողները կամ կարեւորութիւն չտուողները համարում էին ոչ-անկեղծներ, չարամիտներ, քիչ էր մնում՝ նոյնիսկ դաւաճաններ։

Ղեց տարւայ պառակտումից յետոյ, բոլորը իրաւունք ունէին սպասելու, որ պաշտօնական յայտարարութիւնից վերջը, նախկին «Հնչակեան» ընկերները եթէ ոչ միացել գոնէ մօտեցել են իրար. եթէ չեն պատժել մեղադրուածներին, գոնէ անաչառօրէն քննել են նրանց գործերը և չէզոքացրել այդ ոչ յուսալի անձնաւորութիւններին։ Երկարատեւ անգործունէութիւնից յետոյ, բոլորը իրաւունք ունէին կարծելու, որ երբ Լօնդօնում ստեղծուում է 6 հոգուց բաղկացած կենտրոն, երբ հրատարակում են կուսակցութեան հաշուով երկու թերթ, գոնէ ոչ պակաս թւով ընկերներ կան մեր յուսահատ ժողովրդի մէջ, գէթ առաջին հիմնաքարն է դրում յեղափոխական այն մեծ շէնքի, որը մանրամասնօրէն գծագրում էր թղթի վրայ։

Դժբախտաբար ամենալաւատեններն իսկ ծայրայեղ յոռետեսներ դուրս եկան։ Անցան հազիւ մի քանի ամիսներ և մենք ականատես ենք ցաւալի տեսարանի։

Մէկ «Հնչակ» ի տեղ այսօր հրատարակում են երկու «Հնչակ», երկուսն էլ Հնչակեան կուսակցութեան կենտրոնական օրգան են անւանում իրենց, երկուսն էլ իրենց գոյութիւնը համարում են 16 տարով, երկուսն էլ հրատարակում են Լօնդօնում, միայն թէ մէկը խմբագրում է արևմտեան բարբառով և դիմողներին տալիս մէկ հասցէ, իսկ միւրը արևելեան բարբառով և տալիս է մի այլ հասցէ։

Իբրև «Եղափոխական գործող մարմիններ»՝ Հնչակեանները բաժանուած են այժմ երեք մասի՝ վերակազմեալների, հինների և երրորդ խմբակի, որ չի ընդունում կատարած բաժանումը և առաջարկում է անտես առնել իրականութիւնը։ Ամէն մէկը այդ խմբերից փրփուրը բերանում պաշտպանում է իր «կուսակցութիւնը» և լուստանքներ է թափում երէկայ «ընկերների» գլխին, հռչակելով նրանց «խարեբայ», «հրէշ», «տղանտրջի», «անագնիւ», «դաւաճան», «վաճառուած»...

Հասարակութիւնը և մանաւանդ «մասնաձուլերը» հեղեղում են գաղտնի և յայտնի մերկացումներով, որոնցից անտանելի գարշահոտութիւն է փչում։ Եթէ ճիշդ է այդ բոլոր գրուածների կէսը, նոյնիսկ կէսի կէսը, մարդկային և յեղափոխական բարոյականութիւնից ցած պիտի համարի Հնչակեան ղեկավարների⁹⁾ 10-ը։ Մարդ մնում է շարած և ակամայ հարց տալիս իրեն, էլ ո՞վ մնաց մէջտեղը։ Սակայն ամենացաւալին այդ չէ դեռ ևս։ Երեւան եկած մերկացումներից պարզում է¹⁾, որ շնայած որոշ անձնաւորութիւնների վրայ բարդուած ծանր մեղադրանքներին, որ մասամբ պատճառ եղան Հնչակեան կուսակցութեան բաժանման, 1902-ին «միութիւն» կայացնելիս հարկ չէ համարուած քննել այդ զեղծութիւնը և տնօրինել այդ անձանց դերը։ Ամէն մէկը, այսուհետեւ կարող է վստահ լինել որ ամենախայտառակ վարմունքից յետոյ նոյնիսկ, նրան բաւական է միայն յետ քաշել... մինչև

բարեպատեհ ժամանակ, հաւատացած լինելով, որ կազմակերպութիւնն ու ընկերները կ'անցնեն այդ ամէնը լուռութեամբ:

Բոլորին յայտնի դարձած մերկացումներից պարզ է նոյնպէս, որ ինչպէս բաժանւած ժամանակ, նոյնպէս և «միութիւնից» յետոյ, այլեւայլ տեղերից «գործի» անունով գանձւած դրամները (այնչէ 100 հազար ֆր.) ծախսւած են կենտրոնի անդամների, թերթեր հրատարակելու և աննպատակ ճանապարհորդութիւնների վրայ...

Ամէն բան կայ հրատարակւած մերկացումների մէջ, բացի բուն գործի մասին մտածելուց, բացի ծառայելուց այն ժողովուրդին, որի շահերի պաշտպանութեան անունով կապւած են մարդիկ, յանուն որի հայը վճարում է դառը քրտինքով վաստակած սանտիմները:

Տխուր հանգամանք, որ հայկական դատի անկեղծ պաշտպանների համար հաւասար է ծանր պարտութեան: վեց տարուց աւելի է, ինչ Հնչակեանները զբաղւած են իրար քննելով, դատելով, ծրագիրը փոխելով, նոր վարչութիւններ ու ձեռնարկներ կազմակերպելով և ընդունելով. հետեւեք՝ առայժմ ոչինչ և նոյնիսկ բացասական և կազմակերպութեան հմայքի և ղեկավարների բարոյականի ու հասունութեան և կատարած գործերի տեսակէտից այդ վեց տարւայ ընթացքում Հնչակեանների կողմից արւած է ոչինչ, կամ աւելի ճիշդ, մի քանի քայլ... դէպի յետ: Յոյսի նշոյլ անգամ չկայ, որ գոնէ իրենց առողջ մասով — խօսքներս անհատների և խմբակների մասին չէ, հարկաւ — Հնչակեանները կարող կը լինեն ներկայանալ իբրև մաքուր, վստահութիւն ներշնչող յեղափոխական մարմին, որի հետ օգտակար լինէր կապելու Այդ է թելադրում մեզ իրականութիւնը և այդ տխուր իրականութիւնն ու դառն փորձն է, որ ստիպում է մեզ յայտարարել, որ Բիւրօս հրատարակում է այսուհետև լինել միջնորդ Հնչակեան մարմինների և Դաշնակցութեան միջև՝ «միութիւն» հաստատելու համար:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ժընէվ, 23 օգոստ. 1903

Հնչակեան Միաց. Կուս. Կենտր. վարչութեան

Լօնդօն

Յարգելի հայրենակիցներ,

Միանգամայն համակիր — ինչպէս քանիցս յայտարարած ենք արդէն — բոլոր ճշմարիտ յեղափոխական ուժերի միութեան և անդիմանալով շեր ընկեր չ. Խ. — ի հետ ունեցած խօսակցութիւնից, որ 1900-ի յունւարին Վերակազմուել չեղ. կուսակցութեանը մեր առաջադրած ն ախնակաւն պայմանները արդէն՝ իրագործւած են, մենք օգտակար ենք համարում սկսել այժմ պաշտօնական բանակցութիւններ:

Ուստի առաջարկում ենք.

1) Ուղարկել մեզ Միաց. Կուսակցութեան ծրագիրը, որպէս զի հարաւարտութիւն ունենանք ճիշտ գաղափար կազմել այն կէտերի մասին, որոնք վերաբերում են շեր կազմակերպութեան նպատակին, բնութիւն, տարրերին, անհատների պարտաճանաչումն առաջ, ղեկավարներին և այլն:

2) Նշանակել մի-մի (կամ եթէ կամենաք, երկու-երկու) պատգամաւորներ շեր և մեր կողմից:

Մենք նպատակաւորմար ենք գտնում, որ պատգամաւորները ընտրեն փոխադարձ համաձայնութեամբ:

Ի նկատի ունենալով, որ Միութեան բանակցութիւնները կարող են երկար տեւել և որ շատ ցանկալի է այժմից ինչ համեմալ զորակցութեան փորձեր անել — մի բան որ կարելու է նոյնիսկ Միութեանը ղեկարգնելու տեսակէտից — ինչպէս ենք խորհել այն բոլոր մեջնոցների մասին; որոնցով կարելի է գանազան կէտերում

առաջ քերել տեղական մարմինների մերձեցում՝ գործնական ձեռնարկների համար:

Ցանկանալով աշող ևլք բանակցութիւններին՝ խնդրում ենք ընդունել մեր յարգանքների հաւատարմը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

(Կնիք)

Լօնդօն, 30 օգոստ. 1903

Արեւմտեան Բիւրօին

Ժընէվ

Յարգելի հայրենակիցներ,

Ստացանք ձեր 1902 օգոստ. 23 թուակիր նամակը: Ձերը գիտեր, թէ ի՞նչ խօսած կրնայ ըլլալ ձեզ պր. չ. Խ.: Ձերը ալ ուզեր զբաղիւ պաշտօնական հանգամանքէ գուրկ ոնէ անհատական խօսակցութեամբ:

Մեզի համար ուրախալին այն է, որ դուք եւս օգտակար կը նկատէք միութեան ուղղակի և պաշտօնական բանակցութիւնները սկսել:

1) Կը կարծենք սակայն որ բանակցութեանց սկզբնատրութիւնէն առաջ, ծրագրային և այլ խնդիրներ կրնան գործը դժուարացնել և աւելի երկարաձգել գայն: Ուստի փափաքել էի որ ամէն բանէ առաջ երկու կողմի լիազօրները նշանակելէն եւ՝ միութեան բանակցութեանց ընթացքին միայն խնդրոյ առարկայ դառնային երկու կողմի ծրագրները, նպատակն ու թաքծիքը, որոնց մասին այժմէն սիրելի է մեզ յուսալ թէ կարելի պիտի ըլլայ վերջնական ու անյապաղ համաձայնութեան մը գալ:

2) Մենք կը խորհնք որ երկու կուսակցութեանց իրաքանչիւր կամ լիազօրներն ընտրելու, մասնաւորապէս, իրաքանչիւր կուսակցութիւն ի՞նչքը միայն կարող է գիտնալ, թէ իր մէջէն ո՞ր անկի յարմար ու ձեռնհաս է զինքը ներկայացնելու: 3) Գալով երկու կուսակցութեանց այժմէն համեմալ զործակցութեան, ատիկա մե՞ր ալ վաղեմի փափաքն է, որուն իրագործման մասին պէտք եղած խորհրդակցութիւնները կը կատարելիս դարձեալ բանակցութեանց միջոցին:

Եւ արդէն, կը կարծենք որ երկու կուսակցութեանց մասնաշիւղերուն մէջ կիցքերը դարձեալ կարելի, համեմալ խօսակցութեան ոգին արթնցնելու է՝ գործնական միջոցն է՝ միութեան բանակցութեանց սկսել լիազօրներու ընտրութեամբ:

Յուսալով որ շուտով կը հաղորդէք ձեր պատգամաւորներուն ընտրութիւնը,

Մշամք յարգանք

Հնչակեան Կուսակց. Կեդր. վարչ. կողմէն՝ Ատենապար (Ստոր.) (Կնիք) Ատենապետ (Ստոր.)

Ժընէվ, 24 սեպտեմբեր 1902

Հնչակեան Միաց. Կուսակցութեան Կենտրոնին

Լօնդօն

Յարգելի հայրենակիցներ,

Ձեր օգոստ. 30 թուակիր պատասխանը Միութեան խնդրի առիւտ արւած մեր առաջարկին՝ ստիպում է մեզ նորից դառնալ դէպի մեր յարուցած հարցը:

1) Զանազան կուսակցութիւնների գոյութիւնը հասարակական գործունէութեան այս կամ այն ասպարհալում՝ բացատրելու է գանազան պատճառներով. ա) կամ որ այդ կուսակցութիւնները ունեն տարբեր նպատակներ: կամ բ) որ միեւնոյն նպատակն ունենալով՝ նրանք բերում են կազմակերպութեան ձեւով, գործելու եղանակով. գ) կամ թէ ունենալով նման նպատակ կազմակերպութեան ձեւ և մամ մեզ տարբեր շրանք չեն ներշնչում՝ փոխադարձաբար վստահութիւն:

2) Յեղափոխական մարմինների ճշմարիտ միութեան համար, ըստ մեզ, անհրաժեշտ է, որ միացեալ մարմիններ ունենան մէկ նպատակ, մէկ կազմակերպութեան ձեւ և մէկ տարրեր, այսինքն փոխադարձ վստահութիւն, որ մեզ թւում է, ամենապարտաւոր պայման: Պարզ է, կարծում ենք, որ քանի շատ լինեն տարբերութիւնները վերոյիշեալ կէտերում, այնքան աւելի դժուարութիւններ պիտի հանդիպենք միացած ու նոյնիսկ համեմալ գործելու համար: Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրօս — որ Բիւրօս հրատարակում է իր փոխադարձութիւն մտցնել Դաշնակցութեան ծրագրի մէջ — Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրօս նախ քան սմբողջ Դաշնակցութեան կողմից Միութեան բանակ-

ցութեան համար միջնորդի դեր ստանձնելը պէտք է համոզուած լինի, որ երկու մարմինների յեղափոխական աշխարհայեցողութիւնները լսիտ կերպով չեն տարբերուում իրարից, որ էական կէտերում նրանք համաձայն են:

1900 թ-ի սկզբներում պ. Ալեքոբ միջնորդ կատարած քանակ-ցութիւնների ժամանակ Արեւմտեան Բիւրօն դրել էր «նախնական պայմանների շարքում» ա) հետաքննել Արիւսար Արիւսարեանը, եւ բ) հետո պահել վարիչ մարմիններից մի շարք արատաւորած անձանց՝ Աղասի, Ռշտունի, Սուրէն եւ այլն:

Այդ պահանջը շարունակում է պահպանել իր ուժը եւ շնչակեան հատուկ միջնորդի կողմից յետոյ ցանկի վրայ աւել-նում է նախկին կենտրոնի անդամ պ. Նազարբէգեանը: Այս կէտի վերաբերմամբ մենք բերանացի վստահութիւն էինք առած Ձեր ընկեր է. Խ.-ից, բայց քանի որ վարչութիւնը «չի ուզեր զբաղել պաշտօնական հանգամանք գործի անհատական խօսակ-ցութիւններով»՝ Բիւրօս պատիւ ունի խնդրելու Ձեզնից անհրա-ժեշտ տեղեկութիւններ այդ կէտի մասին:

4) Ի նկատի ունենալով, որ նշանակելիք պատգամաւորները, իբրեւ մի տեսակ միջնորդներ, ձգտելու են հարթել մեզ բաժանող կէտերը, քայլ առ քայլ մտտեցնել, միացնել երկու կուսակցութիւնները՝ մենք կարծում ենք, որ այդ պատգամաւորները պէտք է վայելեն երկու կողմերի յարգանքն ու վստահութիւնը:

Արժանաւորներին, ծեռնահասներին, հարկաւ, ընտրելու էք Դուք. միայն թէ այդ ընտրութիւնը վերջնականապէս կը վաւե-րացի մեր համաձայնութեամբ, եւ փոխադրմանը: Այդպէս վարում են Նոյնիսկ պետութիւնները՝ դեսպաններ նշանակելու միջոցին: Այս պահանջը Ձեզ քննական ու հասկանալի կը թւայ, եթէ ի նկատի առնէիք, որ մեզ տակաւին ոչինչ յայտնի չէ, թէ ինչ լուծում է տուել Ձեր կուսակցութիւնը վերջին տարի-ներում այլեւայլ անձնաւորութիւնների առթիւ ծագած սրտմտախիթ խնդիրներին:

Սիրում ենք յուսաւ, յարգելի հայրենակիցներ, որ մեր այս առաջարկները կը ներկայանան Ձեզ, իբրեւ միանգամայն արդա-րացի եւ ընդունելի:

Յամենայն դէպս, եթէ չնայած մեր անկեղծ ցանկութեան՝ առաջ մղել Միութեան քանակութիւնների հարցը, այս կամ այն պատճառով մերժէք մեր առաջարկները եւ այլափոխով անհարկն դարձնէք քանակութիւնը Միութեան համար, — ապա մենք օգտա-կար ենք դատում մի-մի ներկայացուցիչների միջնորդ անյապաղ դիմել քանակութեան՝ համարաշէ գործակցութեան մասին՝ այս կամ այն դիպածուով, երկրի այս կամ այն վայրում:

Մեզ համար անհասկանալի եւ վերին աստիճանի ցուալի է, որ Դաշնակցութիւնը աշողում է համերաշէ գործերի ծեռ-նարկել ուրիշ ազգերի ներկայացուցիչների հետ, այն ինչ՝ մեր հայրենակիցների հետ՝ վիճակած է միայն անվերջ քանակցել եւ քաւականամալ միմիայն խօսքերով ու գրութիւններով:

Համերաշէ այդ գործակցութիւնը գնահատելի եւ կարելոք է մասնաւոր այն պատճառով, որ նա վրաւական է վերջնական եւ ժշմարիտ միացման: Լուի թղթի վրայ կայացրած համաձայ-նութիւնները, գիտէք, որ շատ խախտու են: Ապացոյց 1890-ի Դաշնակցութեան եւ շնչ. կուսակցութեան «միութիւնը», որ տեւեց երկու ամիս միայն:

Սպասելով ձեր դրական պատասխանին, խնդրում ենք ընդու-նել, յարգելի հայրենակիցներ, մեր յարգանքների հաւաստիքը.

ԱՐՇԻՄՏԵՍՆԱ ԲԻՒՐՕ

(Կնիք)

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

Հօր պետութիւններից մէկն էլ — սուում են շատերը — հասարակական կարծիքն է: Մամուլը պիտի համարուի եթէ ոչ հայելի այդ հասարակական կարծիքի, գոնէ արտա-յայտիչ ու նշան հասարակութեան մէջ նկատուող կամ զարգանալիք գաղափարների ու երեւոյթների: Այդ տեսա-կէտից է, որ օգտակար է խօսել զանազան տեղերում լոյս տեսնող և թիւրքական իրականութիւնը շօշափող թերթերի մասին:

La Fédératiom Ottomane-ը («Օտտոմանեան Դաշ-նակցութիւն») տպագրուում է Ժընէվ, Փրանսերէն և տաճկերէն լեզուներով: Ինչպէս անունից էլ երևում է,

թերթի խմբագիրների կարծիքով արևելեան հարցի ամե-նանպատակաբար լուծուած կայանում է՝ Տաճկաստանը ինքնավար «Դաշնակցութեան» վերածելու մէջ:

«Իր գոյութեան ամբողջ ընթացքում Տաճկաստանը կարողացել է նաւաճել բայց երբեք չի խորհել փոխելու իր վարչութեան աւերիչ դրութիւնը»: Թերթի հրատա-րակիչների կարծիքով դա է պատճառը քանիցս յայ-տարարած ընթացքների չիրագործման, դա է պատճառը շարունակուող անգթութիւնների ու աւերումների, ինչպէս և փոքրիկ ազգութիւնների անջատման և դա էլ անկասկած, կը լինի պատճառը Թիւրքիայի վերջնական անկման:

«Թիւրքիայի և նրա գերիշխանութեան տակ ապրող ազգերի փրկութեան ու կենդանութեան գրաւականը — սուում են թերթի վարիչները — օսմանեան պետութեան ապակենտրոնացումն է: Մեր «Դաշնակցութեան» ամենա-հիմնական նպատակն է փրկել Թիւրքիայ հայրենիքը, բացատրելով նրան «Դաշնակցական վարչութեան օգտա-կարութիւնը, որ կոչումն ունի պաշտպանել ազգայնու-թեան սկզբունքները, բոլոր նահանգների վարչական ինքնավարութիւնը, դատարանների անկախութիւնը և խօսքի ու մամուլի ազատութիւնը»...

Առողջ մտքեր, գեղեցիկ խօսքեր, որ առաջին անգամն են լուում թիւրքերի բերանից, բայց որոնց իրագործելու միջոցների մասին «Օտտոմանեան Դաշնակցութեան» կող-մակիցները ունեն թերի գաղափար: Յիշեալ թերթի լոյս տեսած երկու համարներում տեղի և անտեղի նրանք բողբոմ են Հայաստանի և Մակեդոնիայի ներքին ինք-նավարութեան դէմ և անհրաժեշտ են համարում կապել նրանց Ալբանիայի, Արաբիայի, Քիւրդիստանի և Յունաս-տանի ինքնավարութեան հետ ու այդպիսով թշնամի են հանդիսանում նոյն իրեն, «Օտտոմանեան Դաշնակցու-թեան» ծրագրած ուղղութեան: Դա առաջ է գալիս, հաւանորէն, նրանից, որ «Օտտոմանեան Դաշնակցութեան» պաշտպանները ընդունում են գաղափարը տեսականօրէն, առանց լրջօրէն մտածելու այն միջոցների մասին, որոնցով պիտի իրագործուի այդ գաղափարը: Վանգնելով սոսկ տեսական հողի վրայ, նրանք մոռանում են, որ Թիւրքիայի այլեւայլ վայրերում գոյութիւն ունեն խոշոր ազգային, կրօնական, կուլտուրական տարբերութիւններ, որոնք հրամայողաբար առաջադրում են տ ա Ր Բ Ե ր բարեփո-խութիւնների անհրաժեշտութիւնը այդ վայրերի մէջ:

Եթէ «Օտտոմանեան Դաշնակցութեան» մտքի պաշտ-պանները քննէին այս հարցերը և հաւասար ու անաչառ աչքով նայէին բոլոր ազգութիւնների վրայ, — մեզ հետ միասին նրանք կը գային այն եզրակացութեան, որ ապագայ մեծ Դաշնակցութիւնը իրագործելու համար, անհրաժեշտ է ինքնավարութեան հարցը սկսել այն երկրներից ու ազգերից, որոնք ենթարկւած լինելով ամենախիստ հալածանքների, միաժամանակ ներկայանում են իբրև ամենահասունացած տարրեր, ընդունակ օգտուելու մտցելիք բարենորոգումներից:

Իտալիայի մայրաքաղաք Հռոմում ևս կայացաւ մեծ միտինգ՝ յօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի, որին մասնակից էին 4,000-ի չափ քաղաքացիներ: Յայտնի գիտնական պրօֆէսօր Սերջի Նախագահուում էր: Ճառախօս-ները գրեթէ բոլորն էլ պարլամենտական գործիչներ էին: Ա ն ա տ օ լ Ք ր ա ն ս երկրորդ անգամ բեմ դուրս

եկաւ Հոռովմուսու և ահագին բազմութիւնը բուռն ծափահարութիւններով և «կեցցէ՛ Քրանսիա» աղաղակներով մի բանի ըրոպէ չէր թոյլ տալիս խօսել մեծանուն Քրանսիացուն:

Առաջ բերենք մի քանի կտոր նրա գեղեցիկ ճառից, որ անշուշտ չէ անցել առանց արձագանքի իտալական բարձր շրջաններում:

... «Ես գալիս եմ, պարոններ, հրաւիրելու Ձեզ դէպի մի գործ, որ շահագրգռում է մարդկայնութեան իրաւունքները եւ աշխարհի խաղաղութիւնը: Ես բերում եմ Հայաստանի դատը ոչ թէ մեռած, այլ կենդանի Իտալիայի առջեւ: Ստուգելու համար, թէ որպիսի նախանձախնայրութեամբ դուք վրէժ էք առնում մարդկային անձնութեան թեմ ի գործ դրած եղևոնափորների համար, եւ թէ որպիսի վեհանձն կարեկցութեամբ դուք պատուում էք ոճրի գոհերին՝ ես պէտք չունեմ փնտրելու յիշողութիւններ, պէտք չունեմ նոյնիսկ յիշեցնելու այն հերոսին, որի յիշատակներով լիցուն էք դուք, — Գարիբալդիին, որ վեհանձն պաշտպանն էր ժողովուրդների բոլոր արդար դատերի, որ մարտնչեց հարստանարած Իտալիայի եւ յաղթւած Ֆրանսիայի համար:»

«Պարոններ, լինելով մի օտար ձեր շարքերում, ես ձեր հիւրն եմ եւ զիտեմ իմ պարտականութիւնները: Ես չեմ արտասանի մի հատիկ խօսք, որ նոյնիսկ երեւոյթ ունենայ շօշափելու ձեր երկրի գործերը. ես բնաւ չեմ զբաղի այն շահերով, որոնց դատաւորը դուք էք միայն: Բայց քանի որ իտալացի եւ ֆրանսիացի — մենք մարդիկ ենք՝ կայ մի քաղաքականութիւն, որ մենք կարող ենք եւ պարտաւոր ենք անել միասին, — մարդասիրական քաղաքականութիւնն է այդ:

«Մի հրէջ, որ միշտ դողում է իր զաղբելի ամենակարողութեան մէջ, որ սարսափում է իր ոճիրներից եւ հանգստացնում է իրեն նորանոր ոճիրներով, Արգել Համիդ Բ., 1893 թւից մինչև 1896, խողխողել ու կենդանի այրել է տեղ 300 հազար հայ, եւ այն ժամանակից ի վեր զարչելի մի զգուշաւորութեամբ ձիգ է թափում մեթօդիկ կերպով քննաշնչելու որքերի այդ ժողովուրդը:

«Դուք զիտեք, որ հայերը իրենց իմացականութեամբ ու գործունեայ բնաւորութեամբ ընդունակ են ստեղծել ամենաճկուն կապ Եւրոպայի ու Ասիայի միջև եւ որ նրանց պատմական առաքելութիւնն է փոխանակել աշխարհի այդ երկու մասերի բերքերը:

«Պրօֆէսոր Անջելօ Գուբերնատիս ասաց, որ նրանք մտցրել են իրենց երկրում բերուպական քաղաքակրթութիւնը: Կեսարի ժամանակ հայոց թագաւորները եկան Հոռովմ, իսկ Կայսրութեան օրերում հայերը ուղարկում էին իրենց երիտասարդութիւնը ուսանելու ձեր բնմասացների դպրոցներում: Միջին դարերում նրանք առեւտրական դայիքներ էին կապել Սիզիլիայի հետ, նաեւ Վենետիկի եւ Ջենովայի հանրապետութիւնների հետ: Մինչև 18-րդ դարը նրանք մեծ առևտուր էին ունեցել Արեւմուտքի հետ: Այնուհետև նրանք թառամել են, ուժասուղտ տանջանքներից, եւ այժմ մեռնում են քրդի դանակի տակ:

«Թող ապրելու հնարաւորութիւն տրւի նրանց եւ դուք կը սեռնէք, որ նրանք կը դառնան յիբաստիս այն ինչ որ եղել են առաջ, — քաղաքակրթութեան ամենաեռանդուն գործակալները Արեւելքում»:

Գերմանական Hamburger Zeitung լրագրի մէջ կարդում ենք մանրամասնութիւններ այն կօնֆերանսի մասին, որ մեր բարեկամ Իւլգէ Քրապպան արեց վերջերս Համբուրգի մէջ:

«Չնայած ամառային հրաշալի եղանակին — ասում է լրագիրը — Erholung կուշաւ. մեծ դահլիճը լցւել էր՝ Համբուրգեան կին-գրող Իլգէ Քրապպանի բանախօսութեան առիթով: Տիկին Քրապպան տարաւ մեզ այն սարսափելի գազանութիւնների մէջ որոնք տանեակ տարիներից

իվեր կատարում են թիւրքերի ձեռքով քրիստոնեայ Հայաստանում: Երեք միլիօն հայեր պարում են նստակեաց՝ թիւրք կայսրութեան մէջ և տառապում ամենաքստմեղի բռնապետութեան տակ: Նրանց արգելած է զէնք կրել և շրջագայել գիւղից գիւղ: Նրանց վրայ տիրում է հարկերի բորբոքի կամայական մի սիստէմ: Ոչ մի քրիստոնեայ չէ կարող երևալ դատարանի առջև, և նրա դէմ գործուած ամէն մի անիրաւութիւն մնում է անպատիժ: Ապա՝ բռնի մասսային կրօնափոխութիւններ, նրբացրած չարաչարանքներ, գազանութիւններ... Հայերը զուրկ չեն արիութիւնից: Ձէնքն է միայն պակասում նրանց:

«Տիկին Քրապպան նկարագրում է հայերին, իբրև վերին աստիճանի կենսունակ և դիմադրութեան ընդունակ մի ժողովուրդ, մաքուր ընտանեկան բարքերով, հաւատարիմ իր կրօնին, լեզւին, հայրենիքին... Հայուհիները ոչ միայն գեղեցիկ են, այլև վերին աստիճանի պարկեշտ, խստաբարոյ, տանեակներով նրանք նետուում էին Եփրատի մէջ՝ թիւրքերի բռնաբարումից ազատելու համար...»

«Տիկինը այնուհետև զգացւած, սրտաճմլիկ խօսքեր ուղղեց հանդիսականներին, խնդրելով նրանց՝ ամէն տեղ տրամադրութիւն ստեղծել, ամէն տեղ գործել տանջող եղբայրների համար: Միաձայն ընդունեց որոշում, որով հանդիսականները՝ իրենց խոր զգւանքը յայտնելով Հայաստանի սարսափների առթիւ՝ յանձնառու եղան աշխատել իրենց ուժերի չափ, որպէս զի ուէ փոփոխութիւն առաջ գայ Բերլինի դաշնագրի հիման վրայ»:

* * *

«ՁէՅԹՈՒՆԻ ԱՆՏԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐՄԱՅԵՆ».— Գ. Ձէյթթունցիի ծանօթ աշխատութեան երկրորդ մասն է դա, որ հրատարակեց վերջերս, նոյնպէս պատկերազարդ:

Այդ երկրորդ հատորիկի առաջին կէսը ներկած է Ձէյթթունի վերջին ապստամբական շարժումներին՝ և հիւսուած լինելով պատմատեսի վկայութիւններից՝ կենդանի շահագրգռում է ընթերցողին:

Թ Ե Ր Թ Օ Ն

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ

Ա Ր Ի Ի Ն Ի Զ Ա Յ Ն Ը

Ղուսաբաց էր, երբ Բաղդօն վերկացաւ, երեսը խաչակնքեց, կողովը շալակեց, դիմեց դէպի գիւղից դուրս մարազը՝ անասունների առաւօտեան յարգը բերելու:

Նախընթաց երեկոյ Բաղդօն էլ շատերի պէս լսեց Քօռ-Հօխիկի սպանութեան մասին, որ կատարւել էր Սիվոկնայ մօտիկ մի ձորում, օրը ցերեկով, ամբողջ կարաւանի ներկայութեամբ: Աստուծոյ մի արդար դատաստան է եղել մտածում էր Բաղդօն, Քօռ-Հօխիկը՝ Սիվոկնայ Վօլ-Միւղիբը պատուհաս էր դարձել իր հարևանների, իր արիւնակից հայ ժողովուրդի գլխին. թիւրքից էլ քրդից էլ աւելի վատթար էր նա:

Ասում էին, որ սպանողները՝ անձանօթ մարդիկ՝ յանկարծ յայտնել էին ձորում, կարաւանի առաջը կտրել և առանց ուէ առաջնորդի քսան հողու մէջ ճանաչել էին Քօռ-Հօխիկին և սպանել: Ջարմանալի բան է եղել մտածում էր Բաղդօն, Աստուծու մատը կայ այդ գործի մէջ: Փառք քեզ Աստուած:

Հազար սեւի, ցաւի մէջ թէկուզ մի հատ ոճրագործի կրծքից թափուած արիւնը մարդու երւած, խորոված սիրտը էլի մի փոքր զովացնում է:

Տեսնես ո՞վ են եղել սպանողները... յՈ՞վ և լինեն, Աստուած իրենց գործին յաջողութիւն տալ, վերջացրեց նա բարձրաձայն:

— Բարի լոյս Բաղդո:

Բաղդոն ցնքեց ու շփոթւեց:

— Աստուած բարին, Մստո:

Գիւղի քիւրդ պահապանն էր. Բաղդոն նրան չէր տեսնուի, երբ բարձրաձայն յայտնեց իր վերջին միտքը:

— Բա՛ղդօ, գիշերը վատ երազ խօսմ չեմ տեսել, քեզ քեզ խօսելով ես գնում:

— Վատ երա՞զ... չէ՛, Մստօ, աղօթելով եմ գնում, մրմուռում եմ ինքս ինձ:

Օրն երթայ՝ չարը հետը, մտածեց Բաղդոն հեռա- նայով, մէկն էլ չկայ, որ մեզ ազատի այս անհաւատից:

Խօսքը Մստօի մասին էր, որ իբր թէ գիւղի պահապանն էր, բայց շնորհիւ թիւրք միւզիբի պաշտպանութեան, ինքնագլուխ տէր էր. գիւղացիք դողում էին նրանից, երեսին ժպտում, յետեւից անիծում և շարունակում էին կատարել նրա բոլոր քմահաճոյքները:

Մինչև Մստօին պատահելը Բաղդօի տրամադրութիւնը լաւ էր. Հօխիկի սպանութիւնը նախընթաց երեկոյից մի տեսակ ախորժ մեղմութիւն էր լցրել նրա սրտում: Այս առաւօտ էլ դարձնելուն պէս իսկոյն այդ յլաւ բանը՝ միտն ընկաւ: Ինքը չէր կարող ասել, թէ ինչո՞ւ, բայց Բօռ-Հօխիկի մահը երէկանից մի վայրկեան նրա գլխից չի անցնում: Անիծած Մստօն ո՞րտեղից յայտնեց, Բաղդօն այժմ վախենում է մտածել Հօխիկի մասին, բայց էլի մտածում է. ախորժ տրամադրութիւնը սակայն կորաւ:

«Անհաւատ, սատանայի պէս ո՞րտեղից լոյս ընկաւ», մրմուռաց նա:

Ճը՛ռու... Բաղդոն բացեց մարագի դուռը, ներս մտաւ, և յանկարծ ձեռքերը թուլացան, կողովը վար ընկաւ թիկունքից, դէմքը գունատեց, բերանը անակնկալ սարսափից բաց, աչքերը չռած, նա յետ յետ գնաց, յենեց պատին ու նայում էր շունչը բռնած, անխօս. միւսնոյն ժամանակ պատերի տակից, յարդի միջից, այս ու այն անկիւնից տասնեակ անծանօթներ ոտքից գլուխ դնելով նայում էին նրան կարծես սպասելով, որ Բաղդօն խօսի, մի բան ասի: Բայց նա լուռ էր, կ'ուզէր ճշալ օգնու- թիւն կանչել, կոկորդը սղմած էր, ձայն չկար, զէնքերի փայլը, տասնեակ աչքերի հայեացքը, իսպառ շշմեցրել շացրել էին Բաղդօին:

— Յիսո՛ւս Բրիստոս:

— Մենք չարքեր չենք, ախպեր, խօսեց գլխաւորը վերկենալով ու մօտենալով Բաղդօին. քեզ նման մարդ, քեզ նման հայ-քրիստոնեաներ ենք. մի վախեցիր: Միւս- ները ժպտում էին:

Պատասխանի փոխարէն Բաղդօն աւելի յետ քաշեց, կարծես փորձում էր պատի մէջ մտնել, ծածկել կորչել:

Գլխաւորը քաղցրութեամբ ձեռքը նրա ուսին դրեց:

— Մի վախեցիր, թշնամիներ չենք, այլ բարեկամներ: Մենք չարերի թշնամիներ ենք:

— Հօ... Հօ... Հօխի՛կը... մտածեց Բաղդօն, բայց ակամայ այդ անունը բարձրաձայն դուրս եկաւ իր դող- դողուն շրթունքներից:

— Հըը՛... լսե՛լ ես, այդ լաւ է, մենք ենք...

— Հա՛, լսել եմ... բայց... ես... վկայ է Աստուած: Հա, ես ուրացայ:

— Այդ էլ լաւ է, շարունակեց գլխաւորը, մենք ուրեմն բարեկամ մարդի ենք հանդիպել: Դէ՛, լսիր, երկու գիշեր է քայլում ենք անընդհատ, այսօր քո մարագում կը հանգստանանք, բայց շատ սոված ենք, ճանապարհներս երկար, գործերս շատ. գնա՛ շուտով գիւղ իսկոյն մեզ հացի պաշար բեր, քանի կարող ես շատ, ուտելու և մեզ հետ վերցնելու համար: Հէնց որ գիշերը վճայ հասնի, մենք օրհնելով քեզ ու քո օջաղը, ճանապարհ կ'ընկնենք:

— Հա՛, հա՛, գնամ հաց բերեմ: Բաղդօն դողդոջուն ձեռքը մեկնեց դէպի դուռը և ուզում էր դուրս թռչել:

— Կաց, կոչեց գլխաւորը, Բաղդօն կրկին ցնքեց իր տեղում, աչքերը սարսափելի ու խորհրդաւոր անծա- նօթին յառած:

— Անունդ ի՞նչ է:

— Բաղդօ, քե ծառայ:

— Լսիր Բաղդօ, իմ ախպերն ես, ասացի, որ մենք բարեկամ մարդիկ ենք, բայց մեզ չար կամեցողների համար մենք սարսափելի ենք, երգելի, որ ոչ որի, անգամ կնոջը չես ասի, որ մեզ տեսար:

— Երգում եմ, ժամ... պատարագ... Աստուած... երկինք ինձ խոով կենայ, չէ՞ որ դուք Հօխիկին, ախ, էն Հօխիկին... շանսատակ...

— Մարագից դուրս գալիս չվազես:

— Չէ:

— Այնպէս հանդարտ քայլի, իբր թէ ոչինչ չի պատահել:

— Հա՛:

— Վերադարձին էլ հանդարտ արի, հացը կողովել մէջ, որ մարդ բան չհասկանայ:

— Հա՛, հա՛, լաւ ես ասում, մեռնեմ էդ միրուքիդ: Բաղդօն կրկին ձեռքը մեկնեց դէպի դուռը:

— Կաց, կաց, կողովդ մի թող այստեղ, դարման լցրու տար հետդ, որ բան չկարծեն:

Բաղդօն կուացաւ, կողովը լցրեց, շալակեց և դռնից դուրս եկաւ:

Հազիւ մարագից հեռացած, նա սկսեց նախ արագ արագ քայլել, ապա համարեա վազել: Նա հեւիհեւ առաջ էր գնում գիւղի նեղ ու գալարուն փողոցներով և միւսնոյն ժամանակ մտածում էր, որ ինքը ոչ որի ոչինչ չախտի ասի:

«Չեմ ասի, չեմ ասի», մրմնջում էին նրա շրթունք- ները, բայց երբ ինքը լսում էր իր փսփոսոցը, զարանում էր իր վրայ, շրթունքները կրծոտում էր, մի վայրկեան լուռ, շարունակում էր վազել կողովի տակ կուացած և էլի կրկնում էր ինքն իրեն:

«Չեմ ասի, չեմ ասի, օօ, չեմ ասի»:

— Բաղդօ, ինչո՞ւ ես վազում:

Գարձեալ Մստօն էր... Բաղդօի ոտները դողացին,

— Ի՞նչ... ես գնում եմ հաց... ես չեմ վազում:

— Գժե՛ն էս, ի՞նչպէս թէ չեմ վազում:

Բաղդօն բոլորովին իրեն կորցրեց:

— Մարագում չա՞րք ես տեսել:

— Չէ՛, չէ՛, չարքեր չեն... ես չեմ վազում, հաւատա

չեմ վազում. ինչո՞ւ վազեմ, վա՛հ, այ գնում եմ հանդարտ:

Նա շտապեց հեռանալ:

Մստօն կանգնած նայում էր այս շփոթուած մարդի

յետեւից, որ իր կողովի տակ կուացած վազում էր ան-

ընդհատ և մրմուռում էր մի ինչ որ բան, ապա նրա դէմքը խորամանկ, չարամիտ արտայայտութիւն առաւ, նա նայեց շուրջը կասկածելի ձևով և ճանապարհը փոխելով՝ դիմեց դէպի մարազները:

Բաղդոն կողովը դատարկեց և հեռացավ, գունատաւած՝ ներս ընկաւ խրճիթ: Դուրս քաշեց հացի տաշտը, կողովը ժտեցրեց:

Կինը նայում էր զարմացած:

— Բաղդօ,

Բաղդօն լուռ էր և հացերը իրար ետեւից շտապով շարում էր կողովի մէջ:

— Բաղդօ

Բաղդօն նայեց աղերսական դէմքով և պատասխանի փոխարէն ձեռքը դէպի իր շրթունքները տարաւ, որպէս նշան լուրթեան:

Կինը շփոթեց, նա կարծեց թէ ամուսնուն մի չար բան է պատահեց:

— Ա՛յ մարդ, բռնանամ ես, ի՞նչ եղաւ քեզ, դժուարե՞ր...

— Մո՛ւս, սո՛ւս, կնիկ, մարդ չ'իմանա՛յ... ես ոչ ոքի չեմ ասի, ոչ ոքի, և կրկին ձեռքը դրեց շրթունքներին:

— Հացերն ո՛ւր ես տանում:

— Պանիր էլ բեր:

— Ո՛ւր ես տանում:

— Քոռ-Հօխիկին խօ իմացա՛ր...

— Չա՛րք դիպաւ քեզ մարագում:

— Աստճու մարդն են, ի՞նչ չարք:

— Ո՞վ:

— Հօխիկին իմացա՛ր...

Կինն այս անգամ վազեց դէպի դուռը, որ դուրս գալ հարևաններին կանչի, ամուսինը լաւ չէր:

Բաղդօն առաջը կտրեց, ձեռքը բռնեց:

— Տո՛ւնդ աւերի, ո՛ւր ես գնում, երգել էմ, երգել է՛ր:

— Ո՛ւմը Բաղդօ:

— Ժամ, պատարագ, Աստուած, երկինք, հայ-քրիստոնեաներ են, կինը յուզմունքից ու երկիւղից հեկեկաց, ու կծկեց դրան առաջ:

Բաղդօն մնաց կարկամած, ի՞նչ անելը չիմանալով և ցաւով նայում էր կնոջը:

— Մի՛ լաց, այ կնիկ, վալի՛հ վատ բան չկայ: Ապա մի թափով լի կողովը շալակեց և շարժեց դէպի դուռը: Դեռ քայլը չէմքից դուրս չէքած, Բաղդօն իր տեղում քարացած մնաց... Մարագների կողմից լսեց հրացանների որոտ, նա բերանը բացեց, ակնաջները սրեց աւելի լաւ լսելու համար, որոտը կրկնեց, աւելի ուժգին, աւելի երկար: Բաղդօն դողդողաց, կողովը ձեռքից դուրս պրծաւ, հացերը փուռեցին շէմքի վրայ:

— Մսո՛ն, Մսո՛ն... օօ՛, ես ասացի, ես... երդեցի և ասացի... նա գլուխը յենեց դրանը և մնաց քարացած, հրացանի իւրաքանչիւր ձայնի հետ նրա մէջքը կարծես մի հարած էր ստանում, մարմինը փշաքաղում և կամաց կամաց թուլանում. ի վերջոյ Բաղդօն նստեց հացով լի կողովի առաջ ուժասպառ, ջարդած և խելագար աչքերով նայում էր մի կէտի, կինը լալիս էր մի անկիւնում:

Եւ դրսում հրացանները որոտում էին անընդհատ, մարդկային ձայները բազմանում, փողոցներից լսում էին ոտնաձայներ, ամբողջ գիւղը կարծես աւերում էր:

— Մսո՛ն, Մսո՛ն, ասա՛հ անհաւատ, մռնչում էր Բաղդօն, գլուխը ձեռքերի մէջ առած, կամ կուրծքը

տորելով և աչքերից արցունքը թափուում էր, թափուում...
Նա մատնել էր առանց իմանալու...

— Ձօրանոցի յիսուն զինւորները շրջապատել էին Բաղդօի մարագը, ուր հանգստանում էին տասներկու հայդուկներ և սկսած էր մի անհասարար, յուսահատ կռիւ: Յիսուն հրացան մի անդամից ճարձատում էին չորս կողմից մարագի պատերի վրայ, ծուխը ծածկու՛ւր էր ամէն ինչ և խեղդի մի քանի գնդակներ սուլելով գալիս էին ներսից, զինւորների խմբից մէկնումէկն ընկնում էր հա, հոյանքով ու ոռնոցով:

— Անձնատուր եղէք, գոռում էր յիսնապետը արդէն տասներորդ անգամ:

Մարագը հրէշի պէս ցնցում, ոռնում էր կատաղաբար, հրացանները պայթում էին և գնդակները սուլելով գալիս էին այնտեղից:

— Խմբուցէ՛ք, գոռաց յիսնապետը:

— Ի՛նչ հետ միասին, դէպի դժուրը, գրոհ տէ՛ք, մի բուռը գեափուրներին սուրների վրայ, յառաջ:

Գունդը շարժեց թափով և նոյն վայրկեանին դուռը բացեց կարծես թշնամիներին ընդունելու համար, բայց գնդակների մի տարափ դիմաւորեց յարձակողներին, որոնց առաջին շարքն ընկաւ, իսկ միւսները կրկին ցրուեցին: Մարագի դուռը նորից ծածկեց:

— Վատեր, վատեր, մռնչաց յիսնապետը իր զինւորներին:

Կրկին յարձակում, կրկին կոտորած ու փախուստ: Մարագը մի կատաղած գազան լինէր կարծես, որին ժտեցողը փուռում էր գետին անկենդան: Մի առ ժամանակ զինագողար եղաւ: Յարձակողները շարել էին, իսկ պաշարածները կենդանութեան նշան էին ցոյց տալիս: Կռիւն սկսել էր առաւօտից, ճաշ էր արդէն և դեռ վախճանը յայտնի չէր:

Գնդապետը մտածում էր և յանկարծ նրա աչքերը փայլեցին:

— Կրակ, կրակ տէ՛ք մարագը, որոտաց նա:

Եւ խեղդի հարևան մարագների դէպքերը քանդեցին զինւորները, բոցավառած խուրճերը օդի մէջ պտոյտ գործելով՝ ներս ընկան պաշարած մարագը: Ներսում յարդը բռնկեց, ծուխի ամպեր բարձրացան դեղին բոցերի հետ, այլևս դիմանալ անկարելի էր: Խուրճերը ինչպէս կրակի ամպեր վերելից թափուում էին ու թափուում և մարագը ճարձատելով վառուում էր:

Միւսնոյն ժամանակ յիսնապետի հրամանով զինւորները երկու խիտ շարքով կիսաշրջան կազմեցին մուտքի առաջ՝ հրացանները կազմ ու պատրաստ: Սպասողական, խեղդող դուռից հասաւ լուռ էին պաշարածները, անշարժ կանգնած յարձակողները, միայն մարագն էր ծուխ ու բոց արձակում, ճարձատում և կարծես պատրաստում էր կրակէ շնչով դէպի երկինք բարձրանալ՝ մի կտոր սև ամպի պէս:

Յիսնապետը շարել էր. մի՞թէ վառեցին արդէն, ինչո՞ւ չեն դուրս գալիս. նրա հրամանով զինւորները շարժեցին դէպի դուռը, բայց հէնց նոյն վայրկեանին բոցերի և ծխի միջից դուրս պէս դուրս թուան հայդուկները զոյգ-զոյգ, երեք-երեք՝ անընդհատ պարպելով հրացանները: Առաջինները հէնց մարագի առաջ ընկան թիւրքերի գնդակների միահամուռ տարափի տակ, միւսներն իրենց ընկերների դիակների վրայով ծխի ու գնդակների միջից

վազեցին դէպի սուհները օղակը ճանապարհ բանալու նրանք սարսափելի էին: Ծխից ամբողջապէս սևացած, յոնքերն ու մազերը խանձաւած, ումանց զգեստները ծխալիս, կամ բոցավառ, ուրիշների դէմքը կամ ձեռքերը այրւած ու ճաքճքած, ՏրդէՏի արգանդից դուրս վիժած այդ մարդիկ ասես աւերող, լափող բոցեր լինէին, որ մահաւան դաղտնիքը գրկած վազում էին դէպի թշնամին, աջ ու ձախ հրացան պարպելով: Վատաղի դեւերի այդ խելագար թափին գիմանալ անկարելի էր, թիւրքերը սոսկումով բռնւած՝ յետ յետ քաշւեցին, սուհները օղակը պատուեց և հայդուկների խմբի մնացորդը դէպի լեռները ձգւեց:

Եւ այս բոլորը տեսաւ գիւղը, և այս բոլորն իմացաւ Բաղդօն:

Ուշ գիշեր էր և դեռ վառվում, ծխում էր մարագը: Բոցերի դեղնաւուն, մահատեսիլ լուսաւորութիւնը թափանցիկ, հսկայական պատանի պէս պարուրում էր կծկւած գիւղը, մահաւան քնքշութեամբ դողդողում, գուրգուրում էր մեռած խրճիթները, իսկ նրանից վեր ծխի մութ գալարների մէջ մահը սաւառնում էր և սարսափը մաղում անքուն գլուխներին:

Բաղդօն էլ անքուն էր. նրան թւում էր, որ իր մարագի, իր տան շուրջը, գիւղի փողոցներում, ուր մի կտոր մութ անկիւն կայ, մի վերաւոր է սողում, ծնկների վրայ, գետին չանգուելով քաշ է տալիս իր արիւնոտ, ջախջախւած մարմինը հեռու, հեռու այս անիծւած վայրից դէպի մութ անյայտը: Եւ տնքում էին և մրմնջում, անիծում էին վերաւորները, և նրանց հառաչանքներն ու անէծքը ընկնում էին նրանց արիւնոտ շրթունքներից, որպէս այրող բոցեր, ընկնում էին, եռում և լիզում նզովւած երկիրը, ուր այնքան ոճիրներ կատարւեցին:

Եւ արդար արիւնը մռնչում էր հազար կողմից, Բաղդօն մարագը վառւում էր, իսկ մութ խրճիթը հեծեծում էր վերաւորների հետ:

- Կնիկ, լսում ես:
- Ի՞նչ:
- Չայնը:
- Ո՞ւմ ձայնը այ՛ մարդ:
- Նրանց ձայնը, չէ՞ս լսում:
- Չայն չկար:
- Երգումն ու արիւնը կծկւած են մեր դրան առաջ հեծեծում են, լալիս:
- Քափն է, քնիր, քնիր:
- Կնիկ, ախր հացը չտարայ, մնաց, վեր կենամ, տանեմ:
- Ո՞ւմ տանես, էլ մարդ չկայ, չկար:
- Հա՛, հա՛, էլ չկան, չկան... բոլորին ջարդեցին... և սողում են այժմ կախկաւած միսերը քաշ տալով հողերի միջից... իմ երգումը... նրանց անէծքը... ո՛հ... Բաղդօն մռնչաց սրտի ցաւից և գալարում էր, կուրծքը չանգուում, արցունքը թափւում էր խաւարի մէջ: Մէկ էլ նա ոտքի կանգնեց, խարխափելով գտաւ դուռը:
- Ո՞ւր, այ՛ մարդ:
- Չայնը կանչում է:

Կինը լալիս էր խաւար խրճիթի մէջ, դողալով, սարսափած, իսկ Բաղդօն թափաւում էր դրսում, գլխաբաց, սարսափելի, նայում էր մութ տեղերը, քարերի, պատերի, մացառների տակ: Եւ հեծեծիւնը հնչում էր նրա ականջներում, և նա վազում էր անընդհատ: Մարագի առաջ

նա կանգ առաւ, էլ բոցեր չկային. ծուխն էր բարձրանում որը մոլոր, ինչպէս սև գործի բոթաբեր և գնում էր լիզելու երկնքի անողորմ ճակատը: Այստեղ, այնտեղ դեռ ընկած էին հայդուկների դիակները, մութ ու սև զանգուածներ: Բաղդօն էլ չէր վախենում ոչնչեց, ոչ ոքից: Նա կռւում էր մէկի, միւսի վրայ, լսում էր. չէ՞ն շնչում արդեօք. իզ՛ուր. բոլորը քնած էին յաւիտեան, ցաւը սրտերում, անէծքը շրթունքներին: Երկու հուժկու, թիկնաւէտ մարմիններ իրար վրայ էին ընկած, ինչպէս փոթորկի խլած զոյգ կաղնիներ: Բաղդօն մօտեցաւ, ներքևի մարմինը շարժում, գալարում էր, նա աշխատում էր դուրս գալ մեռած ընկերոջ տակից և սողալ, սողալ... Բաղդօն մօտեցաւ դողդողալով, աղատեց նրան, շալակեց և քայլեց խաւարի միջից դէպի տուն: Հոգին խեղդող սիրտը ճնշող այն հեծեծանքը, այժմ Բաղդօն լսում էր իր թիկունքից. երդումի և արեան բռն էր տանում:

Խրճիթում պլպլում էր ձիթէ ճրագի աղօտ լոյսը. Բաղդօն կուսեց էր վերաւորի գունատ դէմքի վրայ և նայում էր ագահութեամբ, ասես այդ կապտած շրթունքներից իր գերագոյն դատաւճռին սպասելով:

- Զո՛ւր:
- Բաղդօն ջուրը մօտեցրեց նրա շրթունքներին:
- Ես... որ... տեղ... եմ:
- Բարեկամի տան. հանգիստ եղիր:
- Բարեկամ... չկար էն գիւղում... անիրաւներ... դաւաճաններ... իրենց համար... իրենց համար... էլի չեն հասկանում... անիծիք... Բաղդօն սարսուց նստած տեղը:
- Ընկերներս... ասիս. ես ուշացած... կուռնկ եմ... հեռու տեղերից... թեւ կտուրեց... թեւերս կտուրեցին... էլ չեմ կարող... չեմ կարող... ո՞վ ես դու... Ե՛ս, ախր ես հաց... Մասո՛ն... վախեցայ, երկիրք... վախեցայ, ես չեմ մատնել... ես Բաղդօն եմ:
- Բա՛ղդօն... Բաղդօ՛ն...

Վերաւորը երեսը դարձրեց ու լուեց. Բաղդօն ձեռքերով դէմքը ծածկեց, հեկեկաց, արցունքը թափւեց: Ես մատնիչ չեմ. ես մատնիչ չեմ...

Վերաւորն էլ չէր լսում. նա փակեց աչքերը և քնեց յաւիտեան: Ճրագի լոյսը պլպլում էր. բոցը խաղում նահատակի գունատ, վսեմ դէմքի վրայ և Բաղդօն հեկեկում էր, հեկեկում էր անվերջ...

Ամիսներ յետոյ Բաղդօն հայդուկային մի խմբի մէջ էր: — Արիւնը կանչեց, արեան հարկ ունիմ տալու, արեան հարկ, ասաց նա խմբապետին:

Ղ Ա Ր Ի Բ

Ո Ճ Ր Ա Գ Ո Ր Ծ Ն Ե Ր

Վերջին պահուն տեղեկանում ենք ուսաց թերթերից, որ մայիսի 30-ին (հ. տ.) Օդեսսայում սպանւել է Գ ա Ր Ե գ ի ն 2 ի թ ճ ե ա ն:

Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, «Վերակազմեալ» Հնչակեան մարմնի եռանդուն անդամներից մէկն էր, որ երկար տարիների ընթացքում — սխալ թէ ուղիղ ճանապարհով — աշխատում էր յօգուտ մեր ընդհանուր ազգային դատի: Ինչ բացատրութիւն էլ տրւի այդ սպանութեան, նա կը համարւի մի ծանր ոճիր և մի անհեթեթիկ

ապացոյց նրա հեղինակներին բարոյական սնանկութեան: Երբ հակառակութիւն կայ անհասանելի և խմբերի միջև, կարելի է մղել օրինաւոր կռիւ, կարելի է վիճել, յարձակել, ամբաստանել իսկ զեղծումների դէպքում՝ դատի հրաւիրել ամբաստանւածին: Բայց «յաղթանակը» տանելու համար դիմել դաշոյնի, թոյնի կամ մատնու- թեան, — դա գաղափարական մարդկանց գործ չէ, այլ քրք- դական թայֆայականութեամբ կուրացած ոճրագործների:

Մենք ուրախ կը լինէինք յայտարարած տեսնել որ այդ գարշելի գործողութիւնը, ինչպէս և Փօթիում տեղի ունեցած Շահէնի սպանութիւնը՝ ոչ ուղղակի և ոչ կողմ- նակի առնչութիւն չունեն այս կամ այն յեղափոխական խմբակի հետ և որ հայ գաղափարական շրջանները ազատ են այդ տեսակ եղբերնափորձերից:

Վ Ե Ր Զ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Եւրոպական թերթերում լոյս տեսաւ հետեւեալ հե- ուագիրը Կ. Պոլսից.

«Թիւրքաց կառավարութիւնը՝ անհանգիստ՝ նոր հայ յեղափոխական խմբերի երևան գալով, որոնք Ռուսաս- տանից անցել են Բայազէթի ու Սասունի կողմերը՝ խիստ միջոցներ է ձեռք առել սահմանները պահպանելու համար: Հայերը փոքրիկ խմբերով անցել են Բայազէթի շրջանը և այդտեղից ճանապարհ հռնել դէպի Սասունի լեռները, ուր նրանք ապահով են հալածանքից»:

Երբ թղթակիցը հաղորդում է մեզ Վանից (մայիս 6), որ յունւար ամսում ձերբակալուած Վ ա Ր Գ Գ Է ս ը դատապարտուած է ցմահ բերդարգելութեան (100 տարի). վէրքը բուժւելու վրայ է, թէև դահիճները բնաւ հոգ չեն տանում նրա մասին: Փայտի օգնութեամբ հիւանդը կարողանում է ման գալ: Լուր կայ, որ առողջանալուց յետոյ բանտարկեալը պիտի փոխադրուի Կ Պոլսի:

Տ Ե Ռ Օ Ր

Հ. Յ. Դ. Զմիւռնիոյ Կօմիտէի որոշմամբ՝ մայիս 13/26-ին մահուան պատժի ենթարկուեցին յայտնի լրտեսներ՝ ներ- կարար Ծ ա տ ու ը և խայրբուրդ Կ ա Ր ա պ Ե տ, առաջինը՝ իր տան մէջ, երկրորդը՝ հրապարակի վրայ, խուռն բազմութեան ներկայութեամբ: Գնդակներ ար- ձակուած են նաև ոստիկան Ծօմէրի վրայ: Կռիւր քանի մը ըոպէ տեւած է. ոստիկանը, երկու գնդակ արձակելէ յետոյ, տեսնելով որ իր կեանքը վտանգի մէջ է, ստիպ- ւած է եղբր ետ դառնալ:

* * *

Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կօմիտէի որոշումով այս տարւայ ապրիլի 7-ին Սալմաստի Մահլամ գիւղի գե- րեզմանաանը մահուան պատժի ենթարկուեց Հ. Յ. Դաշ- նակցութեան նախկին զինւոր Դարմօն, որը իր կոչումը մոռացած՝ մի պատուհաս էր դարձել անմեղ ժողովրդի համար:

Նոյն վիճակին կ'ենթարկուի ամէն ղը, ով նոյն ըն- թացքը կը բռնէ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՔԻՒՐՕՆ ստացած է՝

Անդրանիկ խմբից (Բուքրէշտ—Ռուսմանիս) 13 ֆրանք, Նի- րատունիքն են՝ Շամիրամ 3, Թաշու 2, Զարուար, Սամ-էլ, Լիանցի, Սիւրուք, Լեւոնիկ, Արմինակ Գ., Աստոն, Պէնկի 1-ական, Շմ. Կ.-խանից (Կօրֆու — Յունաստան) 2 ղըսխմ, ՆՈՐ-ՋՈՒՂԱՑԻՑ Կաշակցականներից գործի համար 100 ֆր., Միլիտէնի հայ ուսա- նողներից «Պրօ Արմէնիա»ի համար 50 ֆր., Աւ.-ից 5 ֆր., Յի- ՌոյոՅ «Արմէնիա Լիբերալիտա»-ից 34. 40 ֆր., Տ.-ից (Լէյզն) 10 ֆր., Արագ-ից (Պլէվնա) 10 ֆր., Արշակունիսց խմբից (Ղօլօ — Յունաստան) 28 ֆր., Սար-ից (Բերն) «Դրօշակ»ի համար 14. 50 ֆրանք: Գումար 266 ֆրանք 90 սանտիմ:

ՈՍՎԱՆԱՊԱՏԻ Կօմիտէն՝

1903 թի յունւար-մարտ ամիսներին Չանգ խմբից անդա- մավճար 35 ուրբէի, վիճակախաղի ապստիկ Յ.-ից 15, Շէրօ Զաթօ խմբից 6. 50, Տէրոյեան խմբ. երեկոյթից 336. 20, Լ. և Ի. 48, Կեանք խմբ. 10, Բաթֆի խմբ. 15. 10, Բաթլէն Սիւնի խմբ. 55, Նժոյզեան երեկոյթից 521, Աւետիսից՝ N° 13-ով 26. 65, 4-ով 190, 11-ով 89, 10-ով 60, 7-ով 37. 20, 21 և 20-ով 81, 3-ով 50. 60, 5 և 6-ով 60. 50, 26-ով 24. 50, X. 16, Y. 24, Z. 2, Մարօ խմբ. 100, Կայարան խմբ. 74, Կուպոն 2. 37, Տէ- րոյեան խմբ. 50. 90, Յունօ խմբ. 11. 90, N° 1 թերթով 46. 50, Շիրվան խմբ. 20, N° 8 թերթով 13, N° 37 թերթով 30, Հաւատ խմբ. 870, Յոյս խմբ. 240, 0 | 0 | 0՝ 3. 18, Նժոյզեան երեկոյթից 589. 91, Լեւոնից 200, Ալլապերտուց 600, Լուսեանից 200, Պալեան 700, Երեկոյթ Ս-ի 74. 42, Տիգրանից 100, Խարթուֆից 100, Եպիֆանց 25, Աւետիսից 25, Գրիշայից 120, ժողոված միանալ ամառը՝ N° N° 139, 153, 157, 146, 154 468. 75, Հաւատ խմբից 50, Յոյս խմբից օրհորդաց 180, Բաթֆի խմբ. 6. 80, Գրքեր 2-50, Բաթֆի խմբ. 14. 60, Նոր Սեբուստի երեկոյթից 100, Ա.-ի և Ս.-ի միջոցով 43. 30, Պետոյի երեկոյթից 200. 3, Շերօ Զաթօ խմբ. 36, Բաթֆի խմբ. 5. 60, Անդրանիկ խմբ. 12, Ռոտոն խմբ. 5, զորքերից 14. 50, Մ. Մ.ից ապստիկներ 59. 40, Ռոտոն խմբ. 25. 50, Յոյս օրհորդ. խմբ. 120, Խոյթ և Երևոնք խմբ. 200, Մած խմբ. 15, Մածի ճիւղից 8. 10, Կեանքի առիթ խմբ. 15, Ս. Ն.-ից 15, երեկոյթի մասցոլը Ս-ից 2, Աւետիսից 2-ից 10, Մի խումբ օրհորդների ձեռագործից 53, Շղթայ խմբ. 118. 77, Տէրոյեան խմբ. անդամավճար 40, Սէրէմճեան խմբ. 10, Արովեան խմբ. 21. 50, Հանգ խմբ. 30, Աստղիկ օրհորդ. խմբ. 1. 50, Ապստիկ Կ-ից 10 ուրբէի: Գումար 1-ն ապրիլի 7847 ուրբէի 76 կօպէկ:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կեդր. Կօմիտէն՝

Գարուն խմբից N° 59 ստացականով 219 դրան, Կայծակ խմբ. N° 60 ստացականով 20, Ղազինից Յ. Կ-ից N° 62-ով «Դրօշակ»-ի համար 30, ՌԱՇՏԻՑ՝ քժ. Թասմանի ձեռքով հանգանակած 4. Յ. Դաշնակցութեան 10-ամեակի առիթով 765 դրան՝ հետեւեալ անձերից՝ Ա. Ր. Մ. 20 դրան, Ոմ 20, Բէգ 50, Արմէն վեց ամսական 10, Շուրա եօթ տարեկան 15, Մ. Մ. 8. 30, Խ. Մ. 10, Մ. Մ. Մ. 10, Յորդ 30, Դուբէն 20, Մարգար Գասպարեան 20, Յովհաննէս 30, Ոմ 50, Յաշողութիւն 10, Արմինակ 10, Ոմ Լի 50, Ոմ 8. 100, Բերդ 50, Ոմ Լարդան 100, Ոմ 20, Շու- շանիկ Թաշու 20, Երզնէի Գ. մի ամսական 30, Մի պարունից 60, ԽՈՅԻՑ՝ 1903 թ. մարտ 27-ին N° 2 թերթով 460 դրան, հան- գանակած հետեւեալ անձերից՝ Փայլակ 10 դրան, Սուրէն 10, Արամ արամեան 25, Ոմ 50, Ա. Ա. Սարգիսեանից 30, Գալի- լիացի 10, Վասպուրականից 20, Կապան 9, Մօրցեքոս 3, Մ. Ն. 8, Պապալ 3, Նահապետ Եկեղ. 6, Ոմ 8. 10, Մարտի- րոսեան 8, Սարգիսեան 10, Գ. Մաթէոս. 6, Կ. Սահակեան 2, Մուրատ Ստեփանեանց 6, Մանասէր Կիրկորեանց 2, Մ. Տ. Մ. 2, Աւօ 10, Հայ մը 10, Ժիկո 8, Պայտ 15, Սորդ 10, Մուրժ 10, Զափ 7, Բերեճ 10, Աղասի 10, Միսար 10, Մատիս 10, Բա- նոնի 10, Բայրաբ 8, Կացին 4, Թվանի 2, Եզրիսեան 6, Մեկ 6, Բէօշարի 8, Բէրդան 6, Աղաշան 2, Սեղան 6, Եղիազար 8, Որդ 15, Զարմայր 6, Ընկեր 8, Սիլա 15, Համբարձում Գրի- գորեան 10, Թ. քաղաքում հանգանակած 1903 թ. մարտ 27-ին N° 20 թերթով Բէ 25 500 դրան, Բարեկամ 500, Համակող 500, Համակող 200, Աշու-Յոկաթ 200, Արծիկ: Մարտիրոս 50, Z. 100 դրան: Ընդհանուր գումար 3544 դրան:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)